Յ. Վ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, Ա. Ա. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

5

Վերահրատարակություն

Երաժշտական ստեղծագործությունների
համացանցային հղումներով

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2020

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.167.1:78(075.3)
ԳՄԴ 85.31գ72
Յ 671

Մասնագիտական խմբագիր՝ Յակով Իվանի Խաչիկյան
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դասագրքին կից տեսաձայնային նյութերը կարող եք գտնել շապիկին պատկերված QR կոդի միջոցով կամ հետևյալ հղումով.
www.zangak.am/9789994119202
Դասագրքի էջերում տեղադրված QR կոդերը համապատասխան նյութերի անմիջական հղումներն են:

Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա.
Յ 671 Երաժշտություն: 5–րդ դաս. դասագիրք/Յ. Յուզբաշյան, Ա. Փահլևանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2020.— 96 էջ:

ՀՏԴ 373.167.1:78(075.3)
ԳՄԴ 85.31գ72

ISBN 978–99941–1–920–2

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2020
© Յուզբաշյան Յ., 2020
© Փահլևանյան Ա., 2020
© ԴՏՀՏՇՀ, 2020

Սիրելի՛
5–րդ դասարանցիներ

Երաժշտության այս դասընթացը ձեր առջև կբացի արվեստի համերաշխ ընտանիքի դռները, կծանոթացնի արվեստի մի շարք տեսակների՝ երաժշտության, գրականության, պարարվեստի, կերպարվեստի, թատրոնի և կինոյի առանձնահատկություններին: Դրանցից յուրաքանչյուրին դուք արդեն առնչվել եք ուսանելու տարիներին, սովորել եք երգել, պարել, նկարել, ընթերցել եք հրաշալի գրքեր, դիտել եք հետաքրքիր ֆիլմեր ու ներկայացումներ:

Կսովորեք ճիշտ երգել ու հասկանալ երաժշտությունը, կբացահայտեք արվեստի տեսակների կապը, կզարգացնեք աշխարհը ճանաչելու, լավը, ճշմարիտն ու բարին ընկալելու և գնահատելու, գեղեցիկի օրենքներով ապրելու կարողությունները:

Կհամոզվեք, որ արվեստի տեսակները շատ ընդհանրություններ ունեն: Դրանցից մեկի իմացությունը ձեզ կօգնի ավելի խորությամբ ընկալելու մյուսները:

Բարի՛ երթ արվեստի ուսումնասիրման ճանապարհին:

Կառլո Սարաչենի. «Ս. Սեսիլիան և հրեշտակը»

ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստը մարդու ստեղծագործական գործունեության ձևերից մեկն է: Այն հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու կյանքը, ճանաչելու աշխարհը, զգալու և տեսնելու գեղեցիկը:

Արվեստի տեսակներից են գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատրոնը, կինոն և այլն: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր «լեզուն» և արտահայտչամիջոցները: Օրինակ՝ գրականության մեջ՝ խոսքը, ռիթմը, հնչերանգը, երաժշտության մեջ՝ ռիթմը, հնչյունների բարձրությունը, ելևէջները, պարարվեստում՝ մարմնի նրբագեղ շարժումները, կերպարվեստում՝ գիծը, գույնը, թատրոնում և կինոյում՝ խոսքը, դերասանական խաղը և այլն:

Արվեստի տեսակները, միմյանց հետ փոխհարաբերվելով և իրար լրացնելով, դառնում են ավելի գրավիչ: Դրա վառ օրինակներից են թատրոնը, օպերան, բալետը և կինոն:

Ճանապարհորդե՛ք արվեստի աշխարհում և կլցվեք ուրախությամբ ու երջանկությամբ:

Ոչ մի այլ միջոց չի կարող ավելի լավ և ավելի արդյունավետ խրախուսել կրթությունը և լուսավորությունը, քան գեղեցիկ արվեստները՝ պոեզիան, երաժշտությունը և գեղանկարչությունը:

Խ. Աբովյան

Ժան–Բատիստ Օուդրի. «Ջութակով նատյուրմորտ»

ԹԵՄԱ 1

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երաժշտությունն ու գրականությունը, հնագույն ժամանակներից բարեկամացած, եկել հասել են մեր օրերը: Այսօր էլ արվեստի այդ տեսակները ջերմացնում են մարդկանց սրտերը և ներգործում նրանց հոգևոր աշխարհի վրա:

Երաժշտությունն ու գրականությունն ունեն ընդհանրություններ, որոնց շնորհիվ դարձել են «ազգակիցներ»: Երկուսն էլ կարող են արտահայտվել մարդու ձայնի միջոցով, ընդհանուր են նաև ռիթմն ու հնչերանգը:

Երաժշտությունն ու գրականությունը, միմյանց լրացնելով, արտահայտում են բազմապիսի զգացմունքներ, մտքեր ու գաղափարներ, նկարագրում են մարդկային փոխհարաբերություններն ու բնության երևույթները: Երաժշտության ու գրականության միասնությունից են ծնվել երգը, ռոմանսը, օպերան, կանտատը և այլն:

Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և իր ոգևորությունով կենդանության շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհքում, որ կոչվում է երաժշտություն:

Հովհաննես Թումանյան

ԵՐԳ

Երգը երաժշտության ամենամատչելի ու տարածված տեսակներից է: Այն մեղեդու միջոցով ընդգծում է գրական տեքստի արտահայտչականությունը: Գրական տեքստն իր հերթին նպաստում է մեղեդու էության դրսևորմանը: Առաջին անգամ երաժշտությանն առնչվում ենք երգի միջոցով: Դրանք օրորոցային երգերն են, որ լսում ենք մեր մայրերի շուրթերից, պարերգերը, որոնք շարժման մեջ են դնում մեր մարմինը, քայլերգերը, որոնց հնչյունների ներքո քայլում ենք:

Կոմիտաս

Սովորե՛ք «Կաքավի երգը»:

Սովորեք

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Հ. Թումանյանի
Երաժշտ.՝ Կոմիտասի





ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշո՛ւն կաքավիկ:

Քո բույն՝ հյուսած ծաղիկներով՝
Շուշան, նարգիզ, նունուֆարով,
Քո տեղ՝ լցված ցող ու շաղով,
Քնես–կելնես երգ ու տաղով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշո՛ւն կաքավիկ:

Քո թև՝ փափուկ ու խատուտիկ,
Պստիկ կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր–կարմիր տոտիկներով
Կշորորաս ճուտիկներով:

Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշո՛ւն կաքավիկ:

Երբ ուշադիր լսում ենք երգը և ճիշտ տրամադրությամբ կատարում այն, ավելի լավ ենք հասկանում, թե ինչպես է երաժշտությունը արտահայտում բանաստեղծության բովանդակությունը, կաքավի շարժումները և այլն:

Կատարեք

«Կաքավի երգը» նախ երգեք ինքներդ, այնուհետև ունկնդրեք Կոմիտասի անվան լարային քառյակի կատարմամբ:

Կոմիտասի անվան լարային քառյակը (կվարտետ) հիմնադրվել է 1925 թ. Մոսկվայի կոնսերվատորիայի մի խումբ հայ ուսանողների կողմից՝ Ավետ Գաբրիելյան (1–ին ջութակ), Լևոն Օհանջանյան (2–րդ ջութակ), Միքայել Տերյան (ալտ), Սարգիս Ասլամազյան (թավջութակ):

Քառյակը համերգային շրջագայություններ է կատարել աշխարհի տարբեր երկրներում և ձեռք բերել համաշխարհային ճանաչում: Ժամանակի ընթացքում փոխվել է քառյակի կազմը, բայց խումբն այսօր էլ հիացնում է իր կատարումներով:

Լարային քառյակի համար Կոմիտասի «Կաքավի երգը» մշակել է Սարգիս Ասլամազյանը:

Սովորեք

Կրկի՛ն ունկնդրեք «Կաքավի երգը» և միաժամանակ ձայնակցե՛ք: Հնչողության տարբերություն նկատո՞ւմ եք երգեցողության և լարային քառյակի կատարման միջև:

Ֆելիքս Մենդելսոն
(1809–1847)

Մինչև հիմա դուք ծանոթացել եք ձայնով կատարվող երգերին: Սակայն կոմպոզիտորները երգեր են գրել նաև առանձին նվագարանների համար: Գերմանացի կոմպոզիտոր Ֆելիքս Մենդելսոնը դաշնամուրային մանրանվագների մի ամբողջ շարք է գրել և անվանել «Երգեր առանց խոսքի»: Յուրաքանչյուր մանրանվագը մի գեղեցիկ պատկեր է: «Վենետիկի գոնդոլավարի երգը» լսելով՝ պատկերացնում ենք երիտասարդին, որը գոնդոլով՝ նավակով, ուղևորներ է տեղափոխում Վենետիկի «ջրանցք–փողոցներով» ու երգում:

Ունկնդրե՛ք «Վենետիկի գոնդոլավարի երգը» մանրանվագը: Պատմե՛ք ձեր տպավորությունները:

Ունկնդրեք

Ժան Բապտիստ Կորո.
«Գոնդոլը Մեծ ջրանցքում»

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ ընդհանրություններ ունեն երաժշտությունն ու գրականությունը:
- Ովքե՞ր են «Կաքավի երգի» հեղինակները:
- «Կաքավի երգը» փորձե՛ք երգել նախ նոտաներով, ապա բառերով:
- Պատմե՛ք Կոմիտասի անվան լարային քառյակի մասին:
- Ի՞նչ է կոչվում Ֆ. Մենդելսոնի՝ դաշնամուրի համար գրված մանրանվագների շարքը:

Երբեմն բանաստեղծներն են իրենց ստեղծագործության համար հորինում համապատասխան մեղեդի: Դուք արդեն ծանոթ եք «Ճախարակ» երգին, որի և՛ խոսքերի, և՛ մեղեդու հեղինակը Ղազարոս Աղայանն է: Այդպիսի երգերից է նաև Հովհաննես Թումանյանի «Ա՜խ, ի՜նչ լավ են» երգը: Երգում գովերգվում են հայրենի բնությունը, ծառ ու ծաղկով զարդարված սարերի առավոտը, հովվի շվիի գերող նվագը:

Հիշե՛ք, որ երկձայն երգեցողության ժամանակ ձայները անհրաժեշտ է սովորել առանձին-առանձին, ապա երգել միասին: Երգելիս պետք է լսել միմյանց, երկու ձայները ճիշտ երգել, որպեսզի երկձայն երգեցողությունը լինի բարեհունչ և գեղեցիկ:

Սովորե՛ք այդ երգը և դասընկերների հետ երգե՛ք երկձայն: Փորձե՛ք երգել նախ նոտաներով, ապա բառերով:

Սովորեք

Ա՜Խ, Ի՜ՆՉ ԼԱՎ ԵՆ...

Խոսք և երաժշտ.՝ Հ. Թումանյանի



Ա՜խ, ի՜նչ լավ են սարի վրա
Անցնում օրերն անո՛ւշ, անո՛ւշ,
Անրջայի՜ն, թեթևասա՜հ
Ամպ ու հովերն անո՛ւշ, անո՛ւշ:

Ահա բացվեց թարմ առավոտ,
Վարդ է թափում սարին, քարին,
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,
Շնչում բուրմունք եղեմային:

Ա՜խ, ի՜նչ հեշտ են սարի վրա
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,
Շվին փչեց հովիվն ահա —
Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ:

Բանաստեղծության մեջ երաժշտություն լսելու համար պետք է ուշադիր կարդալ, ներթափանցել բովանդակության մեջ, զգալ ռիթմը և ինչերանգը: Հնարավոր է, որ այդպիսի ընթերցանության ժամանակ ձեր ներսում ինչի համապատասխան մեղեդին:

Կատարեք

Փորձեք հորինել բանաստեղծություն և դրան համապատասխան մեղեդի:

Սովորեք

Ունկնդրեք «Հովվի կանչը» հայկական ժողովրդական մեղեդին շվի նվագարանի կատարմամբ:
Ի՞նչ պատմվածք, հեքիաթ կամ բանաստեղծություն եք հիշում «Հովվի կանչը» մեղեդին լսելիս:

Փանոս Թերլեմեզյան.
«Աշունը Երևանում»

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳ

Աշուղական երգը հայ երաժշտական արվեստի ճյուղերից է, որի ամենամեծ ներկայացուցիչներից է Սայաթ–Նովան:

Սայաթ–Նովա

ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ
(1722–1795)

Հայ բանաստեղծ, երգիչ, երաժիշտ, աշուղ Սայաթ–Նովան ծնվել է Թիֆլիսում: Ծնողներից լսելով հայկական երգեր՝ նա սիրել է հայրենի երգը, և նրա մեջ հետաքրքրություն է առաջացել երաժշտության հանդեպ:

Խորապես տիրապետելով աշուղական արվեստին՝ նա բազմիցս մրցել և հաղթել է ժամանակի անվանի աշուղներին:

Սայաթ–Նովան իր երգերում փառաբանել է սերը, արդարությունը, ազնվությունը, դատապարտել կեղծիքն ու ստորությունը:

Աշուղ Սայաթ–Նովան իր երգերի թե՛ խոսքի, թե՛ երաժշտության հեղինակն է և լավագույն կատարողը: Ունեցել է գեղեցիկ ձայն. և՛ երգել է, և՛ քամանչայով նվագակցել:

Նա իր երգերից մեկը նվիրել է քամանչային՝ գովերգելով սիրելի նվագարանը: Սայաթ–Նովան ապրել է Թիֆլիսում և ստեղծագործել տեղի բարբառով:

Կոմպոզիտոր Ալեքսանդր Հարությունյանը, ոգեշնչվելով աշուղի երգարվեստով, գրել է «Սայաթ–Նովա» օպերան:

Ունկնդրեք «Քամանչա» երգը, ապա ձայնակցեք:

Ունկնդրեք

Սայաթ–Նովայի քամանչան

ՔԱՄԱՆՉԱ

Ամէն սազի մէջըն գոված,
դուն թամամ տասն իս, քամանչա՛,
Նաքազ մարթ քիզ չի կանա տեսնի՝
դուն նըրա պասն իս, քամանչա՛,
Ղա՛ստ արա՝ էլ լավ օրերու
էդիվըն հասնիս, քամանչա՛,
Քիզ ինձնից ո՞վ կանա խըլի՝
աշուղի բասն իս, քամանչա՛:

Անգաճըտ էրծաթեն պիտի,
գըլուխըտ ջավահիր քարած,
Կութըտ շիրմայեմեն պիտի,
փուրըտ սադափով նախշ արած,
Սիմըտ օսկեն քաշած պիտի,
էրկաթըտ փանջարա արած,
Օչով ղիմեթըտ չի՛ գիտի,
լալ ու ալմասն իս, քամանչա՛:

թամամ — ամբողջ
թամամ տասն իս — տասից պակաս չես
նաքազ — ստոր
քիզ — քեզ
պասն իս — արգելքն ես
դաստ անել — ձգտել
էդիվըն — հեռվից
բաս — զրույց, խոսք
անգաճըտ — ականջդ
շիրմայեմեն — փղոսկրյա
սիմ — նվագարանի լար
փանջարա — պատուհան
ղիմեթ — գին, արժեք
լալ — թանկարժեք քար
ջավահիր քարած — թանկարժեք քարերով պատած
կութըտ — կոթդ
օչով — ոչ ոք
փուրըտ — փորդ
կանա — կարող է

Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞վ է «Ա՜խ, ի՜նչ լավ են...» երգի խոսքի և երաժշտության հեղինակը:
- Ձեզ դո՞ւր եկավ «Ա՜խ, ի՜նչ լավ են...» երգը: Ինչո՞ւ:
- Ասացե՛ք երկձայն երգեցողության կանոնները:
- Ծվի և քամանչա նվագարաններից որի՞ կատարումն է ձեզ ավելի սրտամոտ: Դուք ի՞նչ նվագարան կցանկանայիք նվագել:
- Ո՞վ է Սայաթ–Նովան, նրա երգերից ո՞րը գիտեք:
- Փորձե՛ք հորինել բնությունը գովերգող երգ:

ՌՈՄԱՆՍ

Երաժշտության և գրականության միասնության արդյունք է նաև ռոմանսը:

Ռոմանսը երգ է, որտեղ ավելի խորն են արտահայտվում մարդկային հոգեվիճակը, զգացմունքներն ու հույզերը:

Ռոմանսը պարտադիր ունենում է նվագակցություն, իսկ երգը կամ խմբերգը կարող են կատարվել նաև ակապելլա (a capella), այսինքն՝ առանց նվագակցության:

Ռոմանսը ծագել է XVIII դարում Իսպանիայում և այդպես է կոչվել, որովհետև երգվել է իսպաներեն (ռոմաներեն), այլ ոչ թե լատիներեն, որով երգվում էին հոգևոր երգերը: Հայաստանում ռոմանսներ են գրել շատ կոմպոզիտորներ, սակայն հայկական ռոմանսի հիմնադիրը Ռոմանոս Մելիքյանն է:

Ունկնդրեք

Ունկնդրեք Ռոմանոս Մելիքյանի «Վարդը» ռոմանսը: Տեքստի հեղինակը գերմանացի մեծ բանաստեղծ Գյոթեն է: «Վարդը» բանաստեղծությունը գերմաներենից թարգմանել է Հովհաննես Թումանյանը:

ՎԱՐԴԸ

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին,
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին,
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ. «Քեզ կպոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ դաշտի միջին»:
Վարդն ասավ. «Տե՛ս, կծակեմ,

Որ չմոռնաս փշոտ վարդին,
Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին»:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին,
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին,
Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆ
(1883–1935)

Ռոմանոս Մելիքյան

Ռոմանոս Մելիքյանը ծնվել է 1883 թ. Հյուսիսային Կովկասի Ղզլար քաղաքում: 1902 թ. ավարտելով թեմական դպրոցը՝ ընդունվել է Ռոստովի երաժշտական ուսումնարանը: Այնուհետև ուսումը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայում, ապա տեղափոխվել է Թբիլիսի և զբաղվել երաժշտամանկավարժական գործունեությամբ:

Նա գրել է «Աշնան տողեր», «Զմրուխտի» ռոմանսների և «Զառ–վառ» երգերի շարքերը: Դրանց մեղեդիներն ազգային են, ունեն յուրահատուկ ինչերանգ, ռիթմ, հարուստ, արտահայտիչ նվագակցություն:

Ռոմանոս Մելիքյանը գրել է նաև մանկական, պատանեկան և զինվորական շատ երգեր:

Ունկնդրե՛ք, ապա սովորե՛ք Ռոմանոս Մելիքյանի «Առուն և աղբյուրը» երգ–ռոմանսը:

Ունկնդրեք

ԱՌՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԸ

Խոսք՝ ժողովրդական
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Առու — Հե՛յ, աղբյուրի զուլա՛լ ջրեր,
Ես էլ լինեմ ձեզ հետ ընկեր:
Տեսե՛ք՝ ձեզ հետ Ծաղկաձորում
Ինչպես եմ ես ուրախ պարում:

Աղբյուր — Ջուրի՛կ, ջուրի՛կ, անո՛ւշ քույրիկ,
Ընկերդ եմ ես, սիրում եմ քեզ,
Իրար գրկած՝ սարի լանջով
Իջնենք գնանք Ծաղկունաց ծով:

Այս երգ–ռոմանսը հարուստ է երաժշտական պատկերներով: Բովանդակությունը առվի և աղբյուրի երկխոսությունն է:

«Առուն և աղբյուրը» ռոմանսը պարային բնույթ ունի, հարազատ է հայկական ժողովրդական երգին:

Կատարեք ***Աշխատե՛ք ձեր երգեցողությամբ արտահայտել երգ–ռոմանսի տրամադրությունը: Բովանդակությանը և մեղեդու բնույթին համապատասխան՝ կատարե՛ք պարային շարժումներ:***

Կոմպոզիտորները ռոմաններ են գրել նաև առանձին նվագարանների կամ նվագախմբերի համար: Չնայած այդ ստեղծագործությունները առանց խոսքի են, այնուամենայնիվ, բնույթով երգային են և կոչվում են ***ռոմանս***:

ԱՌՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԸ

Խոսք՝ ժողովրդական
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Չափավոր, աշխույժ

Հե՛յ, աղ - բյու - ղի զու - լա՛լ ջը - ղեր,

Ես էլ լի - նեմ ձեզ հեգ ըն - կեր:

Տե - սե՛ք՝ ձեզ հեգ Ծաղ - կա - ձո - ղում

Ինչ - պես եմ ես ու - ղախ պա - ղում:

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք ռուս կոմպոզիտոր Գեորգի Սվիրիդովի «Ռոմանսը» և հայտնե՛ք ձեր կարծիքը:

Նվագարանային կատարման մեջ մարդկային ձայնի ջերմությանը փոխարինում են նվագարանի գեղեցիկ տեմբրը և արտահայտիչ կատարումը:

Հարցեր և առաջադրանքներ

- Երաժշտության ի՞նչ տեսակներ են ստեղծվում գրականության և երաժշտության միասնությունից:
- Ի՞նչ է ռոմանսը:
- Ո՞վ է հայկական ռոմանսի հիմնադիրը:
- Ի՞նչ ռոմանսներ եք լսել: Փորձե՛ք երգել որևէ ռոմանս:
- Ռ. Մելիքյանի ո՞ր ռոմանսներն ու երգերը գիտեք:
- Ունկնդրե՛ք երգչային և նվագարանային ռոմանսներ: Նկատեցի՞ք որևէ տարբերություն:

ԿԱՆՏԱՏ

Կանտատը իտալերեն բառ է, նշանակում է երգել: Կանտատի երաժշտությունը նույնպես գրվում է գրական տեքստի հիման վրա:

Կանտատը բազմամաս խմբերգային ստեղծագործություն է: 4–րդ դասարանում Ա. Հարությունյանի «Հայրենիք» կանտատից լսել եք «Օրորոցայինը»: Այժմ կսովորեք այդ երգը և կլսեք մի հատված կանտատի 1–ին մասից:

«Հայրենիք» կանտատն ունի հինգ մաս, գրված է երգչախմբի, մենակատարների և սիմֆոնիկ նվագախմբի համար: Գովերգում է հայրենի բնության գեղեցկությունը:

«Օրորոցայինը» կանտատի չորրորդ մասն է: Այն ծավալուն երգ–ռոմանս է՝ քնարական երաժշտությամբ: Արտահայտում է մոր անսահման սերն իր մանկիկի հանդեպ: Ստեղծագործությունը կատարում է իգական թավ ձայնը, որն անվանում են ***մեցցո սոպրանո*** կամ ***ալտ***:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված «Հայրենիք» կանտատի 1–ին մասից, որտեղ շեփորները արձագանքելով ստեղծում են հայրենիքը փառաբանող տրամադրություն:

Խմբերգի երաժշտությունը և տեքստը, որպես մի ամբողջություն, ունկնդրողի մեջ սիրո և հարգանքի զգացում են առաջացնում հայրենիքի, հայ ժողովրդի և նրա մշակույթի հանդեպ:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Օրորոցային» երգ–ռոմանսը «Հայրենիք» կանտատից:

Սովորեք

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Խոսք՝ Սարմենի, Ա. Գրաշու
Երաժշտ.՝ Ա. Հարությունյանի



Արա Բաղդասարյան. «Օրորոցային»

Ննջի՛ր, ննջի՛ր, իմ լո՛ւյս մանկիկ,
Օրոր եմ ասում,
Դու նոր բացված սարի՛ ծաղիկ,
Հոգյա՛կ սիրասուն:
Ննջի՛ր անհոգ, իմ լո՛ւյս մանկիկ,
Գիշեր է դրսում,
Աստղերն ինձ հետ քեզ, անուշի՛կ,
Օրոր են ասում:

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ է նշանակում կանտատ:
- Քանի՞ մասից է բաղկացած «Հայրենիք» կանտատը:
- Ի՞նչ տրամադրություն է արտահայտում «Հայրենիք» կանտատը:
- Պարային շարժումներով արտահայտե՛ք ինչող երաժշտության տրամադրությունը:
- Փորձե՛ք հորինել երգ՝ նվիրված հայրենիքին:

ՕՊԵՐԱ

Օպերա բառն իտալերեն է և նշանակում է ստեղծագործություն, երկ, աշխատանք:

Օպերան երաժշտական թատերական ներկայացում է, որտեղ գրականությունը, երաժշտությունը, պարը, թատրոնը և կերպարվեստը (դեկորներ, զգեստներ) հանդես են գալիս միասին՝ լրացնելով միմյանց:

Օպերան ունենում է մեկ կամ մի քանի գործողություն: Սկսվում է նախերգանքով, որն իտալերեն կոչվում է ***ուվերտյուր,*** այսինքն՝ սկիզբ, բացում:

Օպերան ծնունդ է առել XVII դարում Իտալիայում, որը հայտնի էր երգ ու նվագով համեմված ժողովրդական թատերական ներկայացումներով:

Օպերայի գրական տեքստը՝ լիբրետոն, ստեղծում է գրողը կամ կոմպոզիտորը: Նա վերամշակում է որևէ գրական ստեղծագործություն և հարմարեցնում օպերայի կառուցվածքի ու երաժշտության պահանջներին:

Օպերայի հերոսների դերում հանդես են գալիս մենակատար երգիչներ ու երգչուհիներ: Մեծ դեր ունեն երգչախումբն ու նվագախումբը: Կատարումը ղեկավարում է ***դիրիժորը***: Հերոսներին բնութագրելու համար կոմպոզիտորը հորինում է երգեր, որոնք կոչվում են ***արիա, արիոզո, արիետա*** և այլն: Եթե երկու հերոս երգում են միասին կամ մեկընդմեջ, երգը կոչվում է ***դուետ*** (զուգերգ):

Երգչախմբի օգնությամբ կոմպոզիտորը կարողանում է պատկերել ժողովրդական կյանքի տեսարաններ, արտահայտել մարդկանց վերաբերմունքը կատարվող իրադարձությունների հանդեպ: Նվագախումբը նվագակցում է մենակատարներին և երգչախմբին, նպաստում օպերայի գործողությունների զարգացմանը:

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆ
(1837–1898)

Տիգրան Չուխաճյան

Տիգրան Չուխաճյանը ծնվել է 1837 թ. Թուրքիայի Կոստանդնուպոլիս (այժմ՝ Ստամբուլ) քաղաքում: Սովորել է իտալացի դաշնակահար Մանձոնիի և հայտնի երաժիշտ Գաբրիել Երանյանի մոտ:

1862 թ. մեկնել է Իտալիա և սովորել Միլանի կոնսերվատորիայում: Ծանոթացել է եվրոպական դասական երաժշտությանը՝ մեծ հետաքրքրություն ցուցաբերելով օպերային արվեստի, մասնավորապես՝ իտալացի հանճարեղ կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդիի օպերաների նկատմամբ:

Տ. Չուխաճյանի գրչին են պատկանում «Արշակ Երկրորդ», «Ջեմիրե», «Ինդիանա» օպերաները, «Լեբլեբիջի», «Քյոսե–Քեհյա», «Արիֆի խարդախությունը» երաժշտական կատակերգությունները, երգեր, ռոմանսներ, դաշնամուրային ստեղծագործություններ:

«Արշակ Երկրորդը» հայկական առաջին օպերան է, որը Տ. Չուխաճյանը ստեղծել է 1868 թվականին:

Տեսարան Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայից

«Արշակ Երկրորդ» օպերայի առաջին բեմադրությունը կայացել է 1945 թ. Երևանում՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում: Օպերայի սյուժեն IV դարում Հայաստանում կատարված պատմական դեպքերն են:

Ունկնդրեք

«Արշակ Երկրորդ» օպերայից ունկնդրե՛ք Արշակի արիոզոն ու խմբերգը և պատմե՛ք ձեր տպավորությունները:

«Արշակ Երկրորդ».
Օլիմպիա — Գոհար Գասպարյան,
Արշակ — Միհրան Երկաթ

Սովորեք

Սովորեք Տիգրան Չուխաճյանի «Ազատություն» երգը: Այս երգի բառերը գրել է բանաստեղծ Միքայել Նալբանդյանը:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Միքայել Նալբանդյան
Քանդակագործ՝ Ն. Նիկողոսյան

Ազատ աստվածն այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել,
Ես՝ անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր թևերով
Ազատությունն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրորոցում կապկապած՝
Լալիս էի անդադար՝
Մորս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ուխտեցի
Ազատությունը սիրել:

— Ազատությո՛ւն,— գոչեցի,—
Թող որոտա իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դավ դնե թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու պյուն
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատությո՛ւն:

Կատարեք

Երգի միաձայն մասը կատարում է մեներգիչը, իսկ երկձայնը՝ խումբը: Դասարանը բաժանեք երկու խմբի. առաջին ձայնը երգում է մի խումբը, իսկ երկրորդ ձայնը՝ մյուս խումբը:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Խոսք՝ Մ. Նալբանդյանի
Երաժշտ.՝ Տ. Չուխաճյանի



Հարցեր և առաջադրանքներ

- Արվեստի ո՞ր տեսակների միասնությունն է օպերան:
- Ե՞րբ և որտե՞ղ է ծնունդ առել օպերան:
- Ի՞նչ գիտեք օպերայի մասին: Թվարկե՛ք ձեզ ծանոթ օպերաները:
- Ո՞վ է հայկական առաջին օպերայի հեղինակը: Ե՞րբ է ստեղծվել այդ օպերան և ինչպե՞ս է կոչվում:
- Ի՞նչ օպերաներ է գրել Տիգրան Չուխաճյանը:
- Ովքե՞ր են «Ազատություն» երգի հեղինակները:

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ
(1879–1950)

Արմեն Տիգրանյան

Կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի):

1902 թ. Ա. Տիգրանյանն ավարտել է Թբիլիսիի երաժշտական ուսումնարանը: Ուսանել է կոմպոզիտոր Մակար Եկմալյանի մոտ: Նա բազմաթիվ երգերի, խմբերգերի, կանտատների, դաշնամուրային ստեղծագործությունների, օպերաների հեղինակ է:

1908 թ. ընթերցելով Հ. Թումանյանի «Անուշ» պոեմը՝ Արմեն Տիգրանյանը գրել է համանուն օպերան, որն ավարտել է 1912 թ.:

«Անուշ» օպերան կոմպոզիտորի ղեկավարությամբ 1912 թ. Գյումրիում բեմադրվել է սիրողական խմբի երաժիշտների կատարմամբ: Իսկ 1935 թ. «Անուշը» առաջին անգամ բեմադրվել է Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում և անմիջապես արժանացել համաժողովրդական մեծ սիրո:

Բովանդակության հիմքում Անուշի և Սարոյի դժբախտ սիրո պատմությունն է: Գյուղական հարսանիքի ժամանակ հավաքվածների խնդրանքով մանկության ընկերներ Սարոն և Մոսին կոխի են բռնվում: Սարոն, Անուշի ներկայությունից ոգևորված, մոռանում է ավանդույթով սահմանված կարգը և գետին է տապալում ընկերոջը: Մտերիմ ընկերները թշնամանում են: Մոսին երդվում է սպանել Սարոյին և կատարում է երդումը: Սարոյի սգավոր մայրը ողբում է որդու մահը, իսկ նրա սիրած աղջիկը՝ վշտաբեկ, խելակորույս Անուշը, բարձր ժայռից իրեն նետում է Դեբեդ գետը:

Ա. Տիգրանյանը ոչ միայն հարազատ է մնացել պոեմի բովանդակությանը, այլև արտահայտել է բազմապիսի հույզեր ու տրամադրություններ: Նա ստեղծել է գյուղական

կյանքի անմոռանալի պատկերներ՝ Համբարձման տոնի վիճակահանություն, հարսանիք և այլն: Օպերայի մեղեդիներն այնքան գեղեցիկ են ու անկեղծ, որ անմիջապես ընկալվում են և չեն մոռացվում: Շատերին թվում է, թե «Անուշ» օպերայի հիմքում ժողովրդական մեղեդիներն են: Մինչդեռ Արմեն Տիգրանյանն այս օպերայում ոչ մի ժողովրդական երգ չի օգտագործել, այլ մեղեդիները ստեղծել է ժողովրդական երգի ոգով: Մեղեդու միջոցով նա լիովին արտահայտել է թումանյանական խոսքի համն ու հոտը, ինչերանգն ու իմաստը:

Օպերայի սիրված երգերից են «Ամպի տակից», «Համբարձում յայլա» խմբերգերը, Անուշի «Ասում են՝ ուռին...» և Սարոյի «Բարձր սարեր...» երգերը:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատվածներ «Անուշ» օպերայից, «Ամպի տակից», «Համբարձում յայլա» և «Նախերգանք» խմբերգերը:

Տեսարան «Անուշ» օպերայից. Անուշ — Գոհար Գասպարյան

Սովորեք

Սովորեք «Ամպի Տակից» երգը «Անուշ» օպերայից, երգեք արտահայտիչ ձայնով, համապատասխան դրամադրությամբ:

ԱՄՊԻ ՏԱԿԻՑ...

Ամպի տակից ջուր է գալի,
Դոշ է տալի, փրփրում,
Էն ո՞ւմ յարն է նստած լալի
Հոնգուր–հոնգուր էն սարում:

Ա՛յ պաղ ջրեր, զուլա՛լ ջրեր,
Որ գալիս եք սարերից,
Գալիս անցնում հանդ ու չոլեր,
Յարս էլ խմե՞ց էդ ջրից:

Յարաբ խմեց, յարաբ հովցավ
Էրված սիրտը իմ յարի,
Յարաբ հովցավ, յարաբ անցավ
Այրող ցավը ջիգյարի:



Կատարեք

Երգեք ռիթմական նվագակցությամբ ու պարեք:

Արմեն Տիգրանյան. «Մնուշ»

Սովորեք

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ

Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան
Ջուգել են հանդեր նախշուն գորգերով,
Ջուգել են հանդեր նախշուն գորգերով:

Կրկներգ
Համբարձում յայլա, յայլա՛ ջան, յայլա՛,
Լավ օրեր յայլա, յայլա՛ ջան, յայլա՛:

Փունջ–փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխույժ երգերով,
Վիճակ հանելու աշխույժ երգերով:

Կրկներգ
Համբարձում յայլա, ...

Երգ ու բույր խառնած, թև թևի տված,
Ջուգել են հանդեր, ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում, ինչպես թիթեռներ:

Կրկներգ
Համբարձում յայլա, ...

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՅԱՅԼԱ



Կոմպոզիտորը, ներթափանցելով տեքստի բովանդակության մեջ, ստեղծել է գեղեցիկ, կուռ խմբերգ: «Համբարձում յայլան» պարերգ է:

Կատարեք

Ստեղծեք ռիթմական նվագակցություն, նվագակցեք խմբերգին ու հնչող երաժշտությանը և պարեք:

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ է լիբրետոն, ո՞վ է ստեղծում այն:
- Ի՞նչ դեր է կատարում սիմֆոնիկ նվագախումբն օպերայում:
- Ո՞ր օպերաներն եք լսել:
- Ի՞նչ երգեր գիտեք օպերաներից: Երգե՛ք այդ երգերը:
- Այցելե՛ք Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոն, լսե՛ք «Անուշ» և «Արշակ Երկրորդ» օպերաները:

ՎՈԼՖԳԱՆԳ ԱՄԱԴԵՈՒՍ ՄՈՑԱՐՏ
(1756–1791)

Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ

Ավստրիացի հանճարեղ կոմպոզիտոր Մոցարտը ծնվել է 1756 թ. Զալցբուրգ քաղաքում: Վաղ մանկությունից նա ցուցաբերել է արտակարգ երաժշտական ընդունակություններ: Երեք տարեկանում արագորեն ըմբռնում էր ու վերարտադրում լսած երաժշտությունը: Նվագել է կլավեսին (դաշնամուրի նախատիպը), երգեհոն և ջութակ:

Մոցարտի տաղանդի վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր պատմություններ կան: Մի օր հայրը, ընկերոջ հետ գալով տուն, չորսամյա որդուն տեսնում է սեղանի մոտ նոտաներ գրելիս: Հոր հարցին Մոցարտը պատասխանում է. «Կոնցերտ եմ գրում կլավեսինի համար»: Հայրը կարծում է, թե դա մանկական խաղ է, սակայն ուշադիր նայելուց հետո ուրախացած դիմում է ընկերոջը.

— Տեսնո՞ւմ եք, թե որքան ճիշտ է մտածված ու շարադրված այս երաժշտությունը:

Դա կլավեսինի համար Մոցարտի գրած առաջին կոնցերտն էր:

Հայրը Վոլֆգանգին և դստերը, ով լավ դաշնակահարուհի էր, հաճախ շրջագայությունների էր տանում Գերմանիա, Շվեյցարիա, Հոլանդիա, Ֆրանսիա, Իտալիա, որտեղ նրանց դիմավորում էին ցնծությամբ: Վոլֆգանգին անվանում էին XVIII դարի հրաշամանուկ:

Մոցարտը արտակարգ լսողություն և հիշողություն ուներ: Մի անգամ եկեղեցում լսելով երգչախմբային մի բարդ ստեղծագործություն՝ վերադարձել է տուն և հիշողությամբ գրի առել:

Տասը տարեկանում Մոցարտը գրել է իր առաջին օպերան՝ «Ապոլոնը և Հիացինտը»: Տասնչորս տարեկանում քննություն է հանձ-

Կարմոնտել. «Լեոպոլդ Մոցարտը իր երեխաների՝ Վոլֆգանգի և Մարիա Աննայի հետ»

նել և ընդունվել երաժշտական ակադեմիա, որտեղ կարող էին անդամագրվել միայն ճանաչված կոմպոզիտորները:

Մոցարտը ստեղծագործել է երաժշտական տարբեր ժանրերով՝ մանկական երգերից մինչև մեծածավալ սիմֆոնիաներ ու օպերաներ:

Նրա մանկական երգերից են «Օրորոցի երգը», «Գարնան կարոտը» և այլն: Գրել է ստեղծագործություններ տարբեր նվագարանների համար, կոնցերտներ, սոնատներ, մենուետներ, պիեսներ, սիմֆոնիաներ և բազմաթիվ օպերաներ: Մոցարտի լավագույն օպերաներից են «Ֆիգարոյի ամուսնությունը», «Դոն Ժուանը», «Կախարդական սրինգը» և այլն:

Մոցարտի կյանքի վերջին շրջանի նշանավոր ստեղծագործություններից է «Ռեքվիեմը», որը սգո ձոն է: Այն համաշխարհային երաժշտական գրականության գլուխգործոցներից է:

Ունկնդրեք

Ծանոթացեք Մոցարտի «Կախարդական սրինգ» օպերային, որը հեքիաթային բովանդակություն ունի:

«Կախարդական սրինգ». բեմական ձևավորում

«Կախարդական սրինգ» օպերայի գլխավոր հերոսը արքայազն Տամինոն է: Նա, հաղթահարելով բազմաթիվ փորձություններ,

գտնում է իր սիրուն՝ Գիշերվա թագուհու դուստր Տամինային: Վտանգներով լի ճանապարհին նրան օգնում է թագուհու նվիրած կախարդական սրինգը: Տամինոյի կողքին է նաև թռչնորս Պապագենոն, որը նույնպես գտնում է իր ընկերուհուն՝ Պապագենային: Պապագենոյի կախարդական օգնականները զանգակներն են, որոնք միշտ փրկում են հերոսներին:

Չարի ու բարու պայքարն ավարտվում է բարու և լույսի հաղթանակով:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված «Կախարդական սրինգ» օպերայի նախերգանքից և Պապագենոյի երգը:

Սովորեք

Սովորեք Մոցարտի «Գարնան կարոտ» երգը:

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Արի՛, մայի՛ս, արի՛, թող պուրակը կանաչի,
Առվի խոխոջի տակ մանուշակը բողբոջի,
Ես ի՞նչ սիրով կուզեի կապույտ մանուշակ քաղել
Եվ ինչպիսի՜ զմայլանքով մարգերի մեջ զբոսնել:

Ա՜խ, թե պուրակները նորից նոր ծաղկեն կրկին...
Ե՛կ, սիրելի՛ մայիս, կանչում ենք քեզ խնդագին:
Արևը թող ժպտա մեզ, մանուշակը ծաղկի,
Կկուն նորից կուկու կանչի, սոխակն էլ
թող երգի:

Հարցեր և առաջադրանքներ

- Ովքե՞ր են «Կախարդական սրինգ» օպերայի գլխավոր հերոսները:
- Մոցարտի ո՞ր ստեղծագործություններն եք լսել:
- Ի՞նչ բովանդակություն և բնույթ ունի «Կախարդական սրինգը»:
- Պատմե՛ք Մոցարտի մասին:

ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Դուք իմացաք, որ երաժշտությունը և գրականությունը իրար հետ կապված են բազմաթիվ թելերով: Նրանց համար ընդհանուր են ռիթմը և հնչերանգը (ինտոնացիան): Երբ գրականությունն ու երաժշտությունը հանդես են գալիս միասին, ավելի ուժեղ են ներգործում մարդու վրա:

Արվեստի այդ երկու տեսակների միասնության արդյունքում ծնվել են երգը, ռոմանսը, կանտատը, օպերան և այլն:

Կռահե՛ք՝ ովքեր են...

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԱՐՎԵՍՏԸ

ԹԵՄԱ 2

Երաժշտությունը և պարը միշտ ուղեկցել են մարդկանց: Այսօր էլ արվեստի այդ տեսակներն անբաժան են մեզանից:

Դրանք օգնում են լիարժեք արտահայտելու մեր զգացմունքներն ու հույզերը:

Կոմիտասի խոսքերով՝ երգն ու պարը կանոնավորում են մեր զգացմունքները, հոգևոր աշխարհը, օգնում մեր մեջ և շրջապատում տեսնելու և զգալու գեղեցիկը:

Սովորեք

Սովորեք կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի «Պսակ-պսակ» երգ-պարը:

ՊՍԱԿ–ՊՍԱԿ

Խոսք՝ Հ. Աղաբաբի
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Պսակ–պսակ, տիկնի պսակ,
Փեսան եկավ՝ լիքը քսակ: } *2 անգամ*
Տիրնանինե՛, տիրնանինե՛,
Զուռնի ձենը գեղով մին է: } *2 անգամ*

Բոյը՝ չինար, մեջքը՝ քամար,
Աչքերը՝ ծով, ունքը՝ կամար: } *2 անգամ*
Տիրնանինե՛, տիրնանինե՛,
Էս մեր փեսան շատ անգին է: } *2 անգամ*

«Պսակ–պսակը» կատակային բնույթի երգ–պար է: Կոմպոզիտորն օգտագործել է հայկական ժողովրդական երաժշտությանը հատուկ ռիթմեր և ինչերանգներ, որոնք, միաձուլվելով խոսքի բովանդակությանը, ստեղծել են երաժշտական արտահայտիչ կերպարներ:



Կատարեք

Ձեր երգեցողությամբ աշխատեք արտահայտել երգ-պարի տրամադրությունը: Փորձեք պարային շարժումներով ստեղծել երգ-պարի բովանդակությանը համապատասխան կերպար:

Ունկնդրեք

Նորից ունկնդրեք «Պսակ-պսակ» երգ-պարը, ուշադրություն դարձրեք դաշնամուրային նվագակցությանը և կզգաք, թե ինչպես է նվագակցությունը պարերգի հնչողությունը դարձնում ավելի գեղեցիկ ու արտահայտիչ: Երգը կատարեք ռիթմական նվագակցությամբ:



Ունկնդրեք

Ունկնդրեք Կոմիտասի «Շուշիկի պարը», որը գրված է դաշնամուրի համար: Հեղինակը ցանկացել է դաշնամուրի հնչողությունը նմանեցնել թառ ժողովրդական նվագարանի կատարմանը:

Ունկնդրեք

«Շուշիկի պարը» ունկնդրեք նաև թառի կատարմամբ և ասացեք, թե որն է ձեզ ավելի դուր գալիս:

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ տեղ ունեն ձեր կյանքում երգն ու պարը:
- Երբ ունկնդրում եք «Պսակ-պսակ» երգը, ինչո՞ւ է ձեր մեջ պարելու ցանկություն առաջանում:
- Ի՞նչ զգացմունքներ են արտահայտում «Պսակ-պսակ» երգ-պարը և «Շուշիկի պարը»:
- Հնչողության տարբերություն կա՞ արդյոք «Շուշիկի պարի»՝ դաշնամուրով և թառով կատարումների միջև:
- Ստեղծե՛ք ռիթմական նվագակցություններ «Պսակ-պսակ» երգ-պարի ու «Շուշիկի պարի» համար:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Երաժշտությունը և պարը, լինելով արվեստի տարբեր տեսակներ, ունեն մի շարք ընդհանրություններ: Ամենակարևոր ընդհանրությունը ռիթմն է: Առանց ռիթմի հնարավոր չէ այդ արվեստների գոյությունը: Ռիթմն է շարժման մեջ դնում երաժշտական հնչյունները և իմաստավորում մեղեդին: Ռիթմն է, որ կարգավորում է մարդու շարժումները՝ դրանք դարձնելով գեղեցիկ, պլաստիկ, իմաստավորված պար: Այս իմաստով երաժշտությունը և պարը համարվում են ռիթմի «զավակներ»:

Երգով ու պարով մարդն արտահայտում է ամենատարբեր զգացմունքներ. մեկը՝ հնչյունների, մյուսը՝ մարմնի շարժումների միջոցով: Ձեռքերի, մարմնի շարժումները կապված են երաժշտության հետ:

Երաժշտության և պարի միասնության շնորհիվ մարդն ավելի մեծ հնարավորություն է ստանում արտահայտելու խոր հույզեր և մտքեր:

Կոմիտասն ասել է. «Երգեցողությունը և պարը առույգացնում և մարզում են երեխայի մարմինը, նպաստում նրա բնականոն զարգացմանը»: Իրոք, երաժշտությունը, երգն ու պարը հոգու և մարմնի դաստիարակության կարևոր միջոցներ են:

«Երանգի»

«Անիպրայի պարը»

Ունկնդրեք

Ունկնդրեք Կոմիտասի «Երանգի» պարը և նորվեգացի կոմպոզիտոր Էդվարդ Գրիգի «Անիպրայի պարը»: Ասացեք, թե որ պարեղանակը ինչ նվագարաններով է կատարվում: Համեմատեք պարերը և արտահայտեք ձեր տպավորությունները:

Կատարեք

Յուրաքանչյուր պարի տեմպին, ռիթմին և բնույթին համապատասխան՝ կատարեք պարային շարժումներ:

Սովորեք

Սովորեք «Նարոյ» հայկական ժողովրդական պարերգը և պարեք: Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան ձեր ունկնդրած պարերի և «Նարոյ» պարերգի միջև:

ՆԱՐՈՅ

Չափավոր

Ժողովրդական պարերգ



Սարեն ի վար ջուր կուգա,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Քանի խմեմ՝ դուր կուգա,
Ես մարալ եմ, դու՝ ջեյրան:

Սարերի հովին մեռնեմ,
Նարո՛յ, Նարո՛յ, Նարո՛յ ջան,
Շեկ աղբոր բոյին մեռնեմ,
Ես մարալ եմ, դու՝ ջեյրան:

Կատարեք

Երգը կատարեք ռիթմական նվագակցությամբ և պարային շարժումներով:

ԻՆՏԵՐՎԱԼ

Երկու հնչյունների միջև ընկած տարածությունն, ըստ բարձրության, կոչվում է ***ինտերվալ:*** Երաժշտության մեջ ընդունված է ինտերվալները նշանակել լատինական դասական թվանուններով և թվանշաններով.

պրիմա նշանակում է առաջին (մեկ),
սեկունդա՝ երկրորդ (երկուս),
տերցիա՝ երրորդ (երեք),
կվարտա՝ չորրորդ (չորս),
կվինտա՝ հինգերորդ (հինգ) և այլն:

Ինտերվալ կազմող հնչյուններից ներքևինը կոչվում է ***հիմք,*** վերևինը՝ ***գագաթ:***



Եթե ***ռե–մի–ֆա–սո–լա*** հնչյունաշարի ձայնաստիճաններից ***ռե***–ն ընդունենք հիմք, կստանանք հետևյալ ինտերվալները.



Պրիմանն հնչյունաշարի միևնույն բարձրություն ունեցող ձայնաստիճանների կրկնությունն է:



Կատարեք ***Երգեք* ռե–մի–ֆա–սո–լա *հնչյունաշարի* պրիմա *ինտերվալները:***



Սեկունդան հնչյունաշարի երկու հարևան ձայնաստիճանների միջև ընկած տարածությունն է:



Երգե՛ք ***ռե–մի–ֆա–սո–լա*** հնչյունաշարի ***սեկունդա*** ինտերվալները:



Տերցիան հնչյունաշարի որևէ ձայնաստիճանի և նրանից հաշված՝ երրորդ ձայնաստիճանի միջև ընկած տարածությունն է:



Կատարեք *Երգե՛ք* **ռե–մի–ֆա–սո–լա** *հնչյունաշարի* **տերցիա** *ինտերվալները:*



Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞րն է երաժշտության և պարարվեստի ամենակարևոր ընդհանրությունը:
- Ի՞նչ դեր է կատարում ռիթմը երաժշտության մեջ և պարարվեստում:
- Ի՞նչ է ասել Կոմիտասը երգեցողության և պարի մասին:
- Երգե՛ք և պարե՛ք ձեր իմացած պարերգերից մեկը: Ի՞նչ ընդհանրություններ, կապեր եք տեսնում երգի և պարային շարժումների միջև:
- Ասացե՛ք ինտերվալների անունները և երգե՛ք դրանք՝ հիմք ընդունելով ***ռե***–ն:
- «Նարոյ» երգի մեջ ի՞նչ ինտերվալներ կան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ

Հայկական ժողովրդական պարերը բազմազան են իրենց բնույթով, տրամադրությամբ, կատարման ձևով: Հնագույն ժամանակներից սկսած՝ Հայաստանում սիրված ու տարածված են կլոր պարերը, որոնք պարում են խմբով՝ կողք կողքի, կիսաշրջան կազմած: Պարին սովորաբար նվագակցում են դհոլահարը և զուռնահարը կամ տկզարը (պարկապզուկ նվագող): Հայերը սիրում են պարել նաև երգի ուղեկցությամբ: Այդպիսի պարը կոչվում է պարերգ: Երգում են հերթով, իսկ կրկներգը կատարում են միասին:

Սիրված խմբապարերից են կրակոտ «Քոչարին», ռազմական պար «Յարխուշտան», սասնա «Ծափպարը», նազանքով լի «Նազպարը», ուրախ «Վերվերին» և շատ այլ պարեր:

Հայերը պարում են նաև մենապարեր և զուգապարեր՝ ձեռքերի ու դաստակների գեղեցիկ, ճկուն շարժումներով: Դրանք կոչվում են նաև «ձեռնախաղեր»:

Ժողովրդական պարերն ունեն շարժումների յուրահատուկ լեզու, պլաստիկա, մարմնի դիրքեր, ձեռքերի և ոտքերի, գլխի և ուսերի յուրօրինակ շարժումներ, կատարման առանձնահատուկ ձևեր: Կոմիտասը գրել է. «Պարն արտահայտում է տվյալ ազգի բնորոշ գծերը, նրա բարքն ու քաղաքակրթության աստիճանը:

Թեև մարդը պարում է ազատ կամքով, բայց մարմնի տեսակ–տեսակ շարժումներն ակամա մատնում են նրա ներքինը»:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Քոչարի» և «Նազպար» պարեղանակները: Փորձեք պարել:

Սովորեք

Սովորեք «Սարեն կուգա» հայկական ժողովրդական երգ–պարը: Փորձեք պարել:

ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱ

Ժողովրդական երգ–պար

Չափավոր

Սա–րեն կու–գան պաղ – պաղ ջը–րեր,
Բաղ ու բաղ–չի ա՛լ ծա–ղիկ, Կը–կաթ – կը–թի
մար – մար քա–րեն, Բաղ ու բաղ–չի ա՛լ ծա–ղիկ:

Սարեն կուգան պաղ–պաղ ջրեր,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ,
Կըկաթկըթի մարմար քարեն,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ: } *2 անգ.*

Դու ելել ես, կայնել ես դուռ,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ,
Մեջքդ՝ բարակ, ունքդ՝ կամար,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ: } *2 անգ.*

Դու ելել ես, կերթաս մարագ,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ,
Քո ուտելիք՝ մեղր ու կարագ,
Բաղ ու բաղչի ա՛լ ծաղիկ: } *2 անգ.*

Ունկնդրեք

Ունկնդրեք ավստրիացի կոմպոզիտոր Յոհան Շտրաուսի «Գարնանային ձայներ» վալսը, «Տրիկ-տրակ» պոլկան, ապա «Տանգո» և «Սամբա», «Չա-չա-չա» լատինաամերիկյան պարեղանակները: Համեմատեք հայկական պարեղանակների հետ:

Սովորեք

Սովորեք «Թող լարեն ջութակները» չեխական երգ-պարը: Համեմատեք «Սարեն կուգա» երգ-պարի հետ:

ПУСТЬ НАСТРОЯТ СКРИПКИ

Пусть настроят скрипки скрипачи,
Пусть поднимут трубы трубачи —
Нынче будет праздник здесь у нас,
Стар и мал пойдут сегодня в пляс.

Припев: Тра-ля-ля-ля!
Тра-ля-ля-ля!
Стар и мал пойдут
сегодня в пляс.

Кто не хочет с нами танцевать,
Мы того не станем долго звать,—
Сами топнут наши каблуки,
Сами спляшут наши башмаки.

Припев: Тра-ля-ля-ля!

Чешская плясовая





Այս երգն աշխույժ է ու կրակոտ: Երգի մեջ հանդիպում ենք անսովոր ռիթմական պատկերների, որտեղ երաժշտության շեշտը տակտի ուժեղ մասից տեղափոխված է թույլ մասը: Օրինակ՝ ♪ ♩̣ ♪: Երաժշտության մեջ այսպիսի շեշտադրությունը կոչվում է ***սինկոպա:***

Կատարեք ***Ստեղծեք ռիթմական նվագակցություններ և նվագակցեք «Սարեն կուգա» և «Թող լարեն ջութակները» երգ–պարերին:***

Կատարեք ***Պարեք և ասացեք, թե ինչ նմանություն ունեն այդ երգ–պարերը:***

Հարցեր և առաջադրանքներ

- Ովքե՞ր են ստեղծում ժողովրդական պարերը:
- Ի՞նչ ժողովրդական պարեր գիտեք:
- Հիշե՛ք ժողովրդական պարի կոմիտասյան բնութագրումը:
- Ի՞նչ ժողովրդական պարերգեր գիտեք. երգե՛ք և պարե՛ք:
- Ի՞նչ եվրոպական և լատինաամերիկյան պարեր են ձեզ հայտնի: Ո՞րն է ձեր ամենասիրելի պարը:

ԴԱՍԱԿԱՆ ՊԱՐ

Բալետը իտալերեն բառ է, նշանակում է «պարում եմ»: Ձևավորվել է Իտալիայում XVII դարում, ապա զարգացել է Ֆրանսիայում և տարածվել ամբողջ աշխարհում: Հայաստանում պարերի որոշ տեսակներ կատարվել են դեռ հին ժամանակներում թատերականացված ներկայացումներում: Այդ պարերը կատարվել են «համր»՝ առանց երգի, միայն մարմնի շարժումներով՝ ***մնջախաղով, դիմախաղով:*** Դրանք այսօրվա բալետում համարվում են շարժումային արտահայտչամիջոցներ:

Բալետը թատերականացված ներկայացում է, որտեղ դերակատարները պարողներն են: Այստեղ միաժամանակ հանդես են գալիս արվեստի մի քանի ճյուղեր՝ գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատերական արվեստը, մնջախաղը, դիմախաղը:

Գրական տեքստի բովանդակության հիման վրա ստեղծվում է բալետի լիբրետոն, կոմպոզիտորը գրում է երաժշտությունը, նկարիչը ձևավորում է բեմը, ստեղծում դեկորները, նկարում պարողների զգեստների գծագրերը և այլն:

Բալետում պարերի բեմադրությունը կատարում է ***բալետմայստերը:*** Հերոսների զուգապարը կոչվում է ***պա–դե–դե,*** մենապարը՝ ***վարիացիա,*** իսկ խմբապարը՝ ***կորդեբալետ:***

Բալետի երաժշտական մասը ղեկավարում է ***դիրիժորը:***

Հայկական առաջին դասական բալետը գրել է կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Այն կոչվել է «Երջանկություն» և բեմադրվել է 1939 թվականին: Հետագայում բեմադրվել է նորովի՝ «Գայանե» անվանմամբ:

Այդ բալետում Արամ Խաչատրյանն օգտագործել է հայկական ժողովրդական պա-

Էդգար Դեգա. «Պարուհին իր հարդասենյակում»

բային ռիթմեր, հնչերանգներ: Դրա շնորհիվ այն հարազատ է դարձել հայ մարդուն և նպաստել հայկական դասական բալետային ստեղծագործությունների զարգացմանը:

Նախորդ դասարաններում դուք լսել եք հատվածներ «Գայանե» բալետից:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Աղջիկների պարը» «Գայանե» բալետից, ապա սովորեք հայկական ժողովրդական «Աղջիկների պարերգը»: Երգեք և պարեք:

ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՐԵՐԳԸ

Աղջիկ նազերով, նազերով,
Սիրուն մազերով, մազերով,
Աղջի՛կ, մի՛ գար մեր կալերով,
Ինձ գերեցիր հազար նազերով:
Աղջիկ նազերով, նազերով,
Տարան սազերով, սազերով,
Ծամեր հյուսած ոսկի թելերով:

Աղջիկ նազերով, նազերով,
Շեկ–շեկ մազերով, մազերով,
Սիրուն տեսքդ խելքս տարավ,
Ձենդ իմացա՝ իմ սիրտը մարավ:
Աղջիկ նազերով, նազերով,
Տարան սազերով, սազերով,
Ծամեր հյուսած ոսկի թելերով:



Արամ Խաչատրյանի հանճարեղ ստեղծագործություններից է «Սպարտակ» բալետը: Այն Հին Հռոմի ստրուկների և նրանց առաջնորդ Սպարտակի ապստամբության մասին է:

Բալետն առաջին անգամ բեմադրվել է 1956 թ. Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), իսկ 1958 թ.՝ Մոսկվայում: Այնուհետև բեմադրվել է աշխարհի բազմաթիվ օպերային թատրոններում: 1961 թվականին «Սպարտակը» բեմադրվել է Երևանում:

Տեսարան «Սպարտակ» բալետից

Ունկնդրեք

Ունկնդրեք «Սպարտակ» բալետից «Սպարտակի հաղթանակը» և «Ստրուկների ապստամբությունը» հատվածները և պատմեք ձեր տպավորությունները:

Հայկական լավագույն բալետներից է կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանի «Սևան» բալետը: Բալետի բովանդակությունը երիտասարդության կյանքն է: Գլխավոր հերոսներն են Ռուբենը և Ռուզանը, ովքեր, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, հասնում են երջանկության:

«Սևան» բալետում կոմպոզիտորն օգտագործել է հայկական ժողովրդական երգեր ու պարեր: Դրանք վարպետորեն մշակել է սիմֆոնիկ նվագախմբի համար, ստեղծել արտահայտիչ կերպարներով ու տպավորիչ բնապատկերներով հարուստ երաժշտություն: Բալետը բեմադրվել է Երևանում 1956 թվականին:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Քոչարի» և «Էրզրումի» պարերը «Սևան» բալետից: Ուշադրություն դարձրեք, թե կոմպոզիտորը շեփորի և թմբուկի հնչողությունը ինչպես է նմանեցրել զուռնայի և դհոլի հնչողությանը՝ ազգային երանգ հաղորդելով սիմֆոնիկ երաժշտությանը:

Նիկոլայ Կուզնեցով. «Չայկովսկու դիմանկարը»

ՊՅՈՏՐ ԻԼՅԻՉ ՉԱՅԿՈՎՍԿԻ (1840–1893)

Ռուս մեծ կոմպոզիտոր Պյոտր Չայկովսկին հեղինակ է մի շարք օպերաների և բալետների, որոնք բեմադրվում են աշխարհի լավագույն բեմերում:

Նախորդ դասարաններում դուք ունկնդրել եք հատվածներ «Կարապի լիճը» բալետից: Այժմ ծանոթանանք Չայկովսկու «Շչելկունչիկ» բալետին:

Բալետի լիբրետոն ստեղծվել է գերմանացի գրող Հոֆմանի «Շչելկունչիկը և Մկների թագավորը» հեքիաթի հիման վրա: Այս բալետի անվանումը սովորաբար չի թարգմանվում, սակայն այն ծագել է ռուսերեն «щелкать» բառից, որ նշանակում է կոտրել, իսկ Շչելկունչիկը՝ Չրթչրթիկը, խաղալիք ընկույզկոտրիչ է:

Ծննդյան տոնին տանտերերը և հյուրերը զարդարում են տոնածառը և նվերներ պատրաստում երեխաների համար: Սկսվում է տոնահանդեսը: Մաշան, նրա փոքր եղբայրը և հյուր եկած երեխաները շատ լավ տրամադրություն ունեն: Դահլիճում նոր հյուր է հայտնվում՝ խորհրդական Դրոսելմայերը: Նա երեխաներին նվերներ է մատուցում, այդ թվում՝ զվարճալի մի խաղալիք՝ զինվորի տեսքով ընկույզկոտրիչ, որն ընկույզը կոտրում է ատամներով: Մաշայի չարաճճի եղբայրը պատահմամբ կոտրում է Չրթչրթիկի ատամները: Գիշերը Մաշան այցելում է հիվանդ Չրթչրթիկին և ի՞նչ է տեսնում. օ՜, հրաշք, խաղալիքները կենդանացել են և պատերազմի բռնվել Մկների թագավորի ու նրա զորքի դեմ: Չրթչրթիկը դարձել է գեղեցիկ արքայազն և խիզախ զորավար: Իր անագե զինվորների հետ նա հակահարված է տալիս թշնամուն ու հաղթում:

Մաշան ու Չրթչրթիկը, անցնելով ճմեռային եղևնուտի միջով, հասնում են քաղցրավենիքի դղյակը: Ճանապարհին հանդիպում են կենդանացած ձյան փաթիլներին, որոնք վալս են պարում: Դղյակում նրանց դիմավորում են բարի կախարդուհի Դրաժեն ու նրա սպասավորները: Պարում են բոլորը՝ շոկոլադը (իսպանական պար), սուրճը (արաբական պար), թեյը (չինական պար), խաղալիք փոքրիկ հովիվները, ծաղրածուները, ծաղիկները:

Ունկնդրեք

Ունկնդրեք հատվածներ «Շչելկունչիկ» բալետից՝ «Անագե զինվորների քայլերգը», Մաշայի ու Չրթչրթիկի պա–դե–դեն:

Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞ր դարում է ստեղծվել դասական բալետը:
- Ո՞րն է հայկական առաջին բալետը, և ո՞վ է հեղինակը:
- Պատմե՛ք «Սպարտակ» բալետի մասին:
- Պատմե՛ք «Սևան» բալետի մասին:
- Պատմե՛ք «Շչելկունչիկ» բալետի և նրա հեղինակի մասին:

ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Դուք նկատեցիք, որ երաժշտությունը և պարարվեստը հավասարապես գեղեցկացնում են մեր կյանքը: Իմացաք, որ բոլոր պարերի ակունքը ժողովրդական պարն է, որը մեծ դեր է խաղացել դասական պարի ստեղծման գործում:

Ծանոթացաք դասական բալետի ստեղծման ու զարգացման պատմությանը, ինչպես նաև հայ և ռուս հանրահայտ կոմպոզիտորների բալետներին:

Երաժշտության և պարարվեստի հետ ավելի մտերմանալու համար եղե՛ք օպերայի և բալետի թատրոնում, լսե՛ք ու դիտե՛ք բալետային երաժշտություն և ներկայացումներ, սովորե՛ք նոր երգեր, պարեր, միասին երգե՛ք ու պարե՛ք:

ԽԱՉԲԱՌ



1. Ավստրիացի անվանի կոմպոզիտոր, «Կախարդական սրինգ» օպերայի հեղինակը: **2.** Հնչյունաշարի որևէ ձայնաստիճանի և նրանից հաշված՝ երրորդ հնչյունի միջև ընկած տարածությունը: **3.** Ինչպե՞ս է կոչվում օպերայի հերոսի մեներգը: **4.** Բանաստեղծ, Ռ. Մելիքյանի «Պսակ–պսակ» երգի խոսքի հեղինակը: **5.** Բեմական երաժշտական արվեստի տեսակ, որի դերակատարները պարողներ են: **6.** «Դավիթ Բեկ» օպերայի հեղինակը: **7.** Երաժշտությունը գրառելու նշան: **8.** Հովհաննես Թումանյանի պոեմը, որը հիմք դարձավ հայ կոմպոզիտորի օպերայի համար: **9.** Չայկովսկու բալետը՝ գրված գերմանացի գրող Հոֆմանի հայտնի հեքիաթի հիման վրա: **10.** Երաժշտական ժանրերից մեկը: **11.** Երաժշտության կատարման արագությունը: **12.** Արվեստի տեսակ: **13.** Տղամարդու բարձր ձայն:

ԽԱՉԲԱՌ

Հորիզոնական

3. Օպերայի գրական տեքստը: 6. Ինտերվալ: 7. Երաժշտաթատերական ժանր: 8. Գերմանացի կոմպոզիտոր, «Երգեր առանց խոսքի» շարքի հեղինակը: 12. Ինտերվալ: 15. Ռուս մեծ կոմպոզիտոր, «Կարապի լիճը» բալետի հեղինակը: 17. Սիմֆոնիկ նվագախմբի ղեկավարը: 19. Նոտա: 20. Երկու հնչյունների միջև տարածությունը: 21. Երաժշտության կատարման արագությունը: 23. Լարային աղեղնային նվագարան:

Ուղղահայաց

1. XVIII դարի իտալացի կոմպոզիտոր: 2. Մի շեշտից մյուս շեշտն ընկած չափական հատվածը: 4. Նոտա: 5. Եվրոպական պարահանդեսային պար: 7. Աշխարհահռչակ ջութակահար, որին Ա. Խաչատրյանը նվիրել է իր «Ջութակի կոնցերտը»: 8. Ավստրիացի հանճարեղ կոմպոզիտոր, «Կախարդական սրինգ» օպերայի հեղինակը: 9. Նոտա: 10. Տղամարդու թավ ձայն: 11. Նորվեգացի մեծ կոմպոզիտոր: 13. Նոտա: 14. Երգային ժանրերից մեկը: 16. Բազմամաս խմբերգային ստեղծագործություն: 17. Օպերային զուգերգ: 18. Օպերային մեներգ: 22. Նոտա:



ԹԵՄԱ 3

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

Եթե երաժշտությունը, գրականությունը և պարարվեստը «ազգակցական» կապի մեջ են ռիթմի և այլ արտահայտչամիջոցների շնորհիվ, ապա այլ է երաժշտության և կերպարվեստի փոխհարաբերությունը:

Երաժշտության ընկալումը տեղի է ունենում լսողությամբ, իսկ կերպարվեստի ընկալումը՝ տեսողությամբ: Հետևաբար, ***երաժշտությունը լսողական, ժամանակային արվեստ է, իսկ կերպարվեստը՝ տեսողական, տարածական:***

Երաժշտությունը մարդկային զգացմունքները, բնության երևույթներն արտահայտում ու նկարագրում է ինչյունների շարժման և ռիթմի միջոցով, իսկ կերպարվեստն իրականության գեղեցկությունն արտացոլում է գծի և գույնի փոխհարաբերության միջոցով:

Գրիգոր Խանջյան. «Հայոց այբուբեն»

Արվեստի այս երկու տեսակի գլխավոր նմանությունն այն է, որ դրանք հուզական մեծ ներգործություն ունեն մեր հոգևոր աշխարհի և մտքի վրա:

Ուշադիր դիտենք հայ անվանի նկարիչ Գրիգոր Խանջյանի «Հայոց այբուբեն» գոբելենը: Մեսրոպ Մաշտոցի ձեռքին հայոց այբուբենն է, որը եղել և մնում է հայ ժողովրդի ու հայոց լեզվի պահպանման կարևոր նախապայմանը:

Այս նկարը մեզ կապում է մեր նախնիների անցյալի հետ և հպարտության զգացում արթնացնում մեր մեջ: Մենք ստանում ենք հոգևոր սնունդ և բավարարվածություն:

Սովորեք

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք, ապա սովորե՛ք կոմպոզիտոր Ռոբերտ Պետրոսյանի «Պատգամ որդուս» երգը՝ գրված Սիլվա Կապուտիկյանի խոսքերով: Կատարե՛ք արտահայտիչ, բառերն արտասանե՛ք հստակ:

ՊԱՏԳԱՄ ՈՐԴՈՒՍ

Խոսք՝ Ս. Կապուտիկյանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի

Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես
Սիրող քո մոր խոսքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ:
Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի:
Եվ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր՝ անաղարտ...

Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
Քո պապերի աճյունի պես...
Ու տե՛ս, որդի՛ս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թե մո՛ռդ անգամ մտքից հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս...

Երգը բանաստեղծի և կոմպոզիտորի մտքերի ու զգացմունքների միասնության արդյունք է, իսկ նկարը, ինչպես ասել է Մարտիրոս Սարյանը, «յուրատիպ մի հայելի է, որի մեջ արտացոլվում են նկարչի հոգու և մտքի հուզական տպավորությունները»:

Հարցեր և առաջադրանքներ

- Երաժշտությունն ու կերպարվեստը բնութագրե՛ք որպես արվեստի տեսակներ:
- Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր երաժշտությունն ու կերպարվեստը:
- Բովանդակային կապ կա՞ արդյոք «Պատգամ որդուս» երգի և «Հայոց այբուբեն» գոբելենի միջև:
- «Պատգամ որդուս» երգը կատարե՛ք երկձայն: Երգի յուրաքանչյուր ձայն նախ սովորե՛ք առանձին, ապա ամբողջ երգը կատարե՛ք խմբով:

ԿԱՐՈ՞Ղ ԵՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ «ՏԵՍՆԵԼ»

Երգի խոսքերը մեր մտքում, երևակայության մեջ անմիջապես արթնացնում են որոշակի կերպարներ, բնության պատկերներ, իսկ երաժշտությունն ավելի արտահայտիչ է դարձնում այդ պատկերներն ու կերպարները:

Ձեր մտքում կերպարներ կարող են «արթնացնել» նաև այն երաժշտական ստեղծագործությունները, որոնք չունեն խոսք, բայց ունեն խոսուն անվանում, օրինակ՝ Արամ Խաչատրյանի «Ցատկապարանը», Էդվարդ Գրիգի «Ծիտիկը», Գեղունի Չթչյանի «Անձրևը» և այլն:

Այս ստեղծագործությունների վերնագրերը երաժշտության ունկնդրին տեսանելի են դարձնում զանազան պայմանական պատկերներ: Ահա թե ինչ է նշանակում «տեսնել» երաժշտությունը:

Ունկնդրեք

Ունկնդրեք, ապա սովորեք կոմպոզիտոր Աշոտ Սաթյանի «Մարտիկի երգը» և պատմեք, թե ձեր մտքում երգն ինչ կերպարներ ու պատկերներ արթնացրեց:

Կատարեք

Երգը կատարեք երկձայն: Նախ ձայները սովորեք առանձին–առանձին, ապա երգեք միասին, արտահայտիչ՝ լսելով միմյանց:

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Թռչեի մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն,
Տեսնեի այն առուն
Կարոտով ես անհուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում էր սարերում:

Թեքվեի աղբյուրին՝
Կարոտած պաղ ջրին,
Լինեի հանդերում,
Մեր կանաչ մարգերում,
Ուր ծաղկունքն էր բուրում,
Ուր մանուկ օրերում
Հովն էր ինձ միշտ համբուրում:

Հայրենիքն իմ սրտում,
Թե չընկնեմ ես մարտում,
Ա՛խ, իմ մա՛յր թանկագին,
Տուն կգամ ես կրկին,
Կսփոփեմ քո հոգին
Համբույրով սրտագին,
Կսեղմեմ քեզ իմ կրծքին:

ՄԱՐՏԻԿԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Գ. Սարյանի
Երաժշտ.՝ Ա. Սաթյանի

Չափավոր



ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԻՆՏԵՐՎԱԼՆԵՐԻՆ

Ռե–մի–ֆա–սո–լա հնչյունաշարում արդեն ծանոթ եք ***պրիմա, սեկունդա*** և ***տերցիա*** ինտերվալներին: Ծանոթանանք նույն հնչյունաշարի ***կվարտա*** և ***կվինտա*** ինտերվալներին:

Կվարտան հնչյունաշարի որևէ ձայնաստիճանի և դրանից հաշված՝ չորրորդ ձայնաստիճանի միջև եղած տարածությունն է:



Կատարեք *Երգեք* **ռե–մի–ֆա–սո–լա** *հնչյունաշարի* **կվարտա** *ինտերվալները:*



Կվինտան հնչյունաշարի որևէ ձայնաստիճանի և դրանից հաշված՝ հինգերորդ ձայնաստիճանի միջև եղած տարածությունն է:



Կատարեք *Երգեք* **ռե–մի–ֆա–սո–լա** *հնչյունաշարի* **կվինտա** *ինտերվալը:*



Ինտերվալները կարող են հնչել երկու ձևով՝ ***մեղեդային և հարմոնիկ:***

«Մարտիկի երգի» մեղեդու՝ իրար հաջորդող հնչյուններից կազմված ինտերվալները մեղեդային են, իսկ երկու ձայների միաժամանակյա հնչումից կազմված ինտերվալները՝ հարմոնիկ:

Կատարեք

Նոտաներով երգեք «Վա՛յ, լուսինը նորել է» երգը և ասացեք, թե ինչ հարմոնիկ ինտերվալներ կան:

ՎԱ՛Յ, ԼՈՒՍԻՆԸ ՆՈՐԵԼ Է

Հայկական ժողովրդական երգ

Վա՛յ, լուսինը նորել է,
Թագի ակը, թագի ակը կորել է:
Գտել է մեր չար Մոսին,
Պատի տակին, պատի տակին հորել է:



Հարցեր և առաջադրանքներ

- Արվեստի ո՞ր տեսակն է ձեզ ավելի սրտամոտ՝ երաժշտությո՞ւնը, թե՞ կերպարվեստը:
- Ի՞նչ է նշանակում «տեսնել» երաժշտությունը: Բերե՛ք օրինակներ:
- «Մարտիկի երգից» ստացած ձեր տպավորություններն արտահայտե՛ք նկարով:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՄԲ «ՆԿԱՐՎԱԾ» ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԷԴՎԱՐԴ ԳՐԻԳ (1848–1907)

Էյլիֆ Պեդերսեն. «Էդվարդ Գրիգի դիմանկարը»

Էդվարդ Գրիգը XIX դարի նորվեգացի մեծ կոմպոզիտոր է: Նրա երաժշտության շնորհիվ աշխարհը ճանաչեց Նորվեգիան:

Գրիգը գրել է դաշնամուրային մանրանվագների շարքեր, ռոմաններ, դաշնամուրային կոնցերտ, սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններ: Մեծ սեր է վայելում նորվեգացի գրող Հենրի Իբսենի «Պեր Գյունտ» դրամայի համար նրա գրած երաժշտությունը:

«Պեր Գյունտ» դրամայի երաժշտությունից Գրիգը կազմել է երկու սիմֆոնիկ սյուիտ:

Առաջին սյուիտի երկու մասերը՝ «Առավոտը» և «Անիտրայի պարը», դուք արդեն լսել եք:

Այժմ ծանոթանանք մյուս երկու մասերին: «Օզեի մահը» սգո քայլերգի բնույթ ունի, իսկ «Լեռնային արքայի քարանձավում» հատվածը սկզբից հնչում է դանդաղ, խորհրդավոր և չարագուշակ, հետո հետզհետե ուժեղանալով և արագանալով՝ վերաճում է չար ուժերի պարային տարերքի:

«Օզեի մահը» «Պեր Գյունտ» սիմֆոնիկ սյուիտից

Ունկնդրեք

Ունկնդրեք «Լեռնային արքայի քարանձավում» և «Օզեի մահը» հատվածները «Պեր Գյունտ» սյուիտից:

Ձեր ունկնդրած երաժշտության մեջ ի՞նչ կերպարներ և պատկերներ եք «տեսնում»: Դուք նկատեցի՞ք, որ «Պեր Գյունտ» սիմֆոնիկ սյուիտի յուրաքանչյուր մաս ունի իր անվանումը, իսկ ամբողջ սյուիտը՝ որոշակի բովանդակություն: Գրական տեքստ ունեցող նման երաժշտական ստեղծագործություններն անվանում են ծրագրային:

ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ՏԵՍՆԵԼ» ՊԱՏԿԵՐՆԵՐ

Գրական տեքստի հիման վրա ստեղծված երաժշտության մեջ կարող ենք «տեսնել» տեքստի բովանդակությունից բխող պատկերներ:

Առանց գրական տեքստի՝ երաժշտությունը մեր երևակայության մեջ առաջացնում է որոշակի զգայական պատկերներ: Օրինակ՝ ունկնդրելով Արամ Խաչատրյանի «Ջութակի կոնցերտը»՝ հաղորդակից ենք դառնում հեղինակի զգացմունքներին, ապրումներին, տրամադրությանը: Դրան նպաստում է նաև կոմպոզիտորի երաժշտության ազգային լեզուն, որը մեզ հարազատ է ու հասկանալի:

Կատարեք նախորդ դասարանում սովորած «Քելե՛, քելե՛» հայկական ժողովրդական երգը:

Կատարեք

Ունկնդրեք Արամ Խաչատրյանի «Ջութակի կոնցերտից» հատվածներ:

Ունկնդրեք

Դավիթ Օյստրախ, Արամ Խաչատրյան

Արամ Խաչատրյանն իր «Ջութակի կոնցերտը» նվիրել է աշխարհահռչակ ջութակահար Դավիթ Օյստրախին: «Ջութակի կոնցերտում» նվագախմբի կարճ նախանվագը միանգամից ունկնդրի ուշադրությունը կենտրոնացնում է՝ ազդարարելով ջութակի մուտքը:

Կոմպոզիտորը «Ջութակի կոնցերտում» ժողովրդական երգեր չի օգտագործել, սակայն ուշադիր լսելիս կճանաչեք երգերի առանձին հնչերանգներ, դարձվածքներ, որոնք ազգային երանգ են հաղորդում երաժշտությանը: Օրինակ՝ առաջին մասում

անմիջապես ճանաչվում են ժողովրդական «Քելե՛, քելե՛» կրկներգի հնչերանգները («Սիրավոր լորիկ»):

Երկրորդ մասը քնարական երգ է, որի գեղեցիկ մեղեդին մեզ տեղափոխում է մտորումների երազկոտ աշխարհը:

Երրորդ մասն իր սրընթաց, լուսավոր, պարային բնույթի մեղեդիով հիշեցնում է ժողովրդական տոնախմբության տեսարան:

Ժողովրդական երաժշտության տարրերի օգտագործման շնորհիվ Արամ Խաչատրյանն արտահայտել է հայ ժողովրդի հույզերի ուժգնությունն ու խորությունը, ստեղծագործ ոգու հզոր ուժը:

Նոր զարգացում է ստացել ժողովրդի երջանկության թեման: «Ջութակի կոնցերտում» իշխում է բացառիկ մեղեդայնությունը, քնարականությունը, որոնք միահյուսված են պարային տարերքին:

Առանց գրական տեքստի գրված երաժշտական ստեղծագործություններն անվանում են ***ոչ ծրագրային:***

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ գիտեք Էդվարդ Գրիգի մասին:
- Ո՞վ է «Պեր Գյունտ» դրամայի հեղինակը:
- Քանի՞ սյուիտից է բաղկացած «Պեր Գյունտը»:
- Փորձե՛ք «Պեր Գյունտ» սյուիտից ստացած ձեր զգացողություններն արտահայտել նկարով:
- Սիմֆոնիկ ի՞նչ ստեղծագործություններ գիտեք, որոնք գրված են գրական տեքստի հիման վրա:
- Հայ կոմպոզիտորների ի՞նչ ստեղծագործություններ գիտեք, որոնք հորինված են կերպարվեստի ազդեցությամբ:
- Ի՞նչ կերպարներ, պատկերներ է ձեր մեջ առաջացնում Ա. Խաչատրյանի «Ջութակի կոնցերտի» երաժշտությունը: Նկարե՛ք:
- Ոչ ծրագրային սիմֆոնիկ ի՞նչ ստեղծագործություններ եք լսել:

ԿԱՐՈ՞Ղ ԵՔ ԱՐԴՅՈՔ «ԼՍԵԼ» ՆԿԱՐԸ

Դիտեք XVII դարի իտալացի գեղանկարիչ Կարավաջոյի «Վինահարը» նկարը: Անհնար է, որ ձեր մտքում երաժշտություն չհնչի:

Չնայած նկարը որոշակի երաժշտություն չի հնչեցնում, սակայն պատկերված նվագարանը և ոգեշնչված նվագողը երաժշտություն հնչեցնելու պատրանք են առաջացնում, որն անվանում են նկարը «լսելու» զգացողություն:

Ունկնդրեք

Լսեք «Սալտարելո» իտալական ժողովրդական պարային երաժշտությունը վին նվագարանի կատարմամբ: Պարում են զույգերով, թեթև թռիչքներով:

ԱՆՏՈՆԻՈ ՎԻՎԱԼԴԻ (1678–1741)

XVIII դարի իտալացի կոմպոզիտոր Անտոնիո Վիվալդին եղել է հրաշալի ջութակահար, դիրիժոր ու մանկավարժ: Գրել է շուրջ 40 օպերա, կանտատներ, օրատորիաներ, սիմֆոնիաներ:

Նրա սիրելի ժանրերից մեկը կոնցերտն է: Տարբեր նվագարանների և նվագախմբերի համար գրել է 465 կոնցերտ, այդ թվում՝ ջութակի չորս կոնցերտներից կազմված հանրահայտ «Տարվա եղանակները» շարքը: Իտալիան երաժշտական երկիր է: Իտալացիները շատ գեղեցիկ երգեր ունեն և սիրում են երգել:

Անտոնիո Վիվալդի (1678–1741)

Ունկնդրեք

Ունկնդրեք հատված Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակները» շարքից: Ի՞նչ զգացողություն ունեցաք: Համեմատեք վինով հնչած երաժշտությունը և նկարը: Արտահայտեք ձեր կարծիքը:

Արա Բաղդասարյան. «Աշնանային տեսարան»

Ունկնդրեք

Սովորեք «Մամա, չա՛ո» երգը:

Կատարեք

Փորձեք «Մամա, չա՛ո» երգը կատարել երկձայն՝ ռիթմական նվագակցությամբ:

ՄԱ՛ՄԱ, ՉԱ՛Ո

Իպալական ժողովրդական երգ

Հայերեն խոսքը՝ Ա. Բաղդասարյանի

Արթնացա ես առավոտյան վաղ,
Մա՛մա, չա՛ո, մա՛մա, չա՛ո,
Մա՛մա, չա՛ո, չա՛ո, չա՛ո,
Արթնացա ես առավոտյան վաղ,
Անտառի մեր ճամբարում:

Բորբ արևն է մով երկնքում ջինջ.
Մա՛մա, չա՛ո, մա՛մա, չա՛ո,
Մա՛մա, չա՛ո, չա՛ո, չա՛ո,
Բորբ արևն է մով երկնքում ջինջ,
Սարն իր գիրկն է մեզ կանչում:



Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞վ է «Վինահարը» նկարի հեղինակը:
- «Տարվա եղանակները» ստեղծագործությունից լսած հատվածը տարվա ո՞ր եղանակն է ձեզ հիշեցնում: Փորձե՛ք նկարել:
- Վին նվագարանին նայելիս ի՞նչ երաժշտություն է ձեր մեջ հնչում: Փորձե՛ք երգել:

Աշխատանքի ժամանակ ես միշտ երգում եմ՝ երբեմն հենց այնպես ինչ-որ բան, իսկ ժամանակ առ ժամանակ՝ ժողովրդական երգ կամ օպերայի արիա: Երգելն օգնում է, ստեղծում ներքին կենտրոնացում, հատուկ տրամադրություն, ռիթմ: Սա, իհարկե, շատ անհատական է, բայց այսպես է լինում համարյա միշտ: Չէ, հնարավոր չէ ապրել առանց երաժշտության:

Մ. Սարյան

ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՆԿԱՐԻ ՄԵՋ «ԼՍԵԼ» ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Նկարելու ժամանակ նկարիչները հաճախ երաժշտություն են լսում, որը ոգեշնչում է նրանց:

Երբեմն նկարին նայելիս զգում ես, որ նկարը բոլորովին էլ անձայն չէ, և ոչ միայն տեսնում ես նկարը, այլև «լսում» ես նրա «երաժշտությունը»:

Ամեն նկար ունի իր երաժշտությունը: Ամեն երաժշտություն ունի իր նկարը:

Ունկնդրեք

Դիտեք «Հորովել» նկարը և ունկնդրեք Կոմիտասի «Կալի երգը»: Փորձեք կապ տեսնել նկարի և հնչող երգի միջև:

Մ. Սարյան. «Արտագաց» («Հորովել»)

Ուշադիր դիտե՛ք Արա Բաղդասարյանի «Արարատ» նկարը: Հնարավոր է, որ ձեր մտքում արթնանա և հնչի Աշոտ Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի» երգը, որին ծանոթ եք 4–րդ դասարանից:

Այսպիսով՝ նկարը լուռ երաժշտություն է, իսկ երաժշտությունը՝ անտեսանելի, երևակայական նկար:

Ունկնդրեք

Ունկնդրե՛ք «Ես իմ անուշ Հայաստանի» երգը:

Արա Բաղդասարյան. «Արարատ»

Հարցեր և առաջադրանքներ

- Պատմե՛ք Մ. Սարյանի և Կոմիտասի ստեղծագործություններից ստացած ձեր տպավորությունները:
- Բնության տեսարանները ձեր մեջ երաժշտության ի՞նչ զգացողություն են առաջացնում:
- Ովքե՞ր են «Ես իմ անուշ Հայաստանի» երգի հեղինակները:

ՆԿԱՐԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հաճախ կերպարվեստի ստեղծագործությունների ազդեցությամբ ծնվում են երաժշտական նոր գործեր: Այդպիսիներից է կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն: Կոմպոզիտորն այն ստեղծել է իր հոր՝ Մարտիրոս Սարյանի նույնանուն նկարի՝ պաննոյի ազդեցությամբ: Ստեղծագործությունը հարուստ է ոչ միայն երաժշտական արտահայտիչ կերպարներով, այլև բնության երևույթներ, տարբեր իրադարձություններ նկարագրող պատկերներով: Այստեղ կարծես միասնական են դարձել մեծ նկարչի և երաժիշտ որդու մտքերն ու հույզերը: «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի երաժշտությունն ազգային է ու մեզ հոգեհարազատ:

«Հայաստան» սիմֆոնիկ պաննոն չորս մասից բաղկացած սյուիտ է, որի վերջին մասը՝ «Արևոտ օրը», լսել եք 4–րդ դասարանում:

Առաջին մասը կոչվում է «Գառնի», որը դարերի խորքից եկող հեթանոսական տաճարի գեղեցկության ու վեհության գովերգն է:

Երկրորդ՝ «Հին Երևան» մասում նկարագրվում է հին Երևանի պատկերը՝ նեղլիկ փողոցներով, արևելյան շուկայի աղմուկով, դուդուկահարների քաղցրահունչ նվագով:

Մարտիրոս Սարյան. «Հայաստան», պաննո

«Արարատյան դաշտ» կոչվող երրորդ մասի երաժշտությունն արտացոլում է հայրենի բնության գեղեցկությունը, արևափայլ դաշտերի, քչքչան աղբյուրների, Արարատ լեռան ձյունածածկ գագաթի պատկերները:

Սյուիտի վերջին՝ «Արևոտ օր» մասում իշխում են ժողովրդական տոնախմբության տարերքը, Արարատյան դաշտում աշխատող մարդկանց խանդավառությունը:

Կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը խորապես ընկալել է հոր նկարների ոգին և իր տպավորությունները «նկարել» մեկ այլ արվեստի՝ երաժշտության միջոցով: «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն աչքի է ընկնում գունային հարուստ երանգներով:

«Հայաստան» սիմֆոնիկ պաննոն լսելուց հետո կրկին դիտելով Սարյանի «Հայաստան» պաննոն՝ նկարն ավելի լավ ենք ընկալում: Թվում է, թե նկարի առանձին պատկերներ միաձուլվել և ամբողջական են դարձել, գույներն ավելի են պայծառացել, կարծես լեռները, հարթավայրերը, ամբողջ բնությունը կենդանացել են: Եվ այս ամենը՝ երաժշտության շնորհիվ, որն օգնեց շարժման մեջ «տեսնել» նկարի «անշարժ» պատկերները:

Կատարեք

Պատմեք «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյից և նույնանուն գեղանկարից ստացած ձեր տպավորությունները:

«Հայաստան» պաննոն իր արժանավոր տեղն է գրավել նաև Հայաստանի կոմպոզիտորների միության համերգային դահլիճի պատին:

Սովորեք

Սովորեք «Կռունկ Հայաստանի» երգը, որը շատ սիրված է և մեծ տարածում ունի ժողովրդի մեջ, սակայն հեղինակի անունը չի պահպանվել:

Կատարեք

Երգը կատարեք երկձայն: Երկու ձայները սովորեք առանձին-առանձին, այնուհետև երգեք միասին:

ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Դու բարո՛վ եկար, իմ կռո՛ւնկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքես,
Խոսի՛ր ինձ հետ ազատորեն,
Կյանքս կնվիրեմ ես քեզ:

Տեսա՞ր՝ մեր փոքրիկ բուրաստան
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եդեմական դրախտավայր,
Դա կոչվում է մայր Հայաստան:

Հիշեք՝ երկձայն երգեցողության ժամանակ կատարողները պետք է լսեն մեկը մյուսին, երգեն միաձույլ, զեղեցիկ ձայնով:

«Կռունկ Հայաստանի» երգը քնարական է: Այն պետք է երգել արտահայտիչ, բառերը արտասանել հստակ, շունչ վերցնել ֆրազների սկզբին:

Արա Բաղդասարյան. «Աշնանային տեսարան»

Կատարեք *Ինչ զգացմունքներ և մտապատկերներ առաջացան ձեր մեջ «Կոունկ Հայաստանի» երգը կատարելուց հետո:*

ՆԻԿՈԼԱՅ ՌԻՄՍԿԻ–ԿՈՐՍԱԿՈՎ (1844–1908)

Իլյա Ռեպին. «Ռիմսկի–Կորսակովի դիմանկարը»

Նիկոլայ Ռիմսկի–Կորսակովը ռուսական երաժշտության դասականներից է, որի արվեստը համաշխարհային ճանաչում է ստացել:

Երաժշտությամբ զբաղվել է մանկուց: Ավարտելով Սանկտ Պետերբուրգի ծովային կորպուս–ուսումնարանը՝ ստացել է սպայի կոչում և մասնակցել բազմաթիվ ծովագնացությունների: Սակայն երաժշտության հանդեպ սերը հաղթել է, և նա նվիրվել է կոմպոզիտորական արվեստին:

Ռիմսկի–Կորսակովը 15 օպերայի հեղինակ է, այդ թվում՝ «Հեքիաթ Սալթան թագավորի մասին» և «Ոսկե աքաղաղը»՝ ըստ Պուշկինի ստեղծագործությունների, «Ձյունանուշիկը»՝ ըստ Օստրովսկու հեքիաթի: Գրել է բազմաթիվ սիմֆոնիկ, կամերային ստեղծագործություններ, ռոմանսներ:

Ունկնդրելով պարսկական «Հազար ու մեկ գիշեր» հեքիաթաշարի հիման վրա գրված «Շահարազադե» սիմֆոնիկ սյուիտի այն հատվածը, որը փոթորկված ծով է պատկերում, կարծես մտովի տեսնում ենք փոթորկից խենթացած ծովի հսկա ալիքները, դրանց դեմ պայքարող անօգնական նավը, լսում ենք կատաղի քամու սուլոցը:

Ծովի թեման հոգեհարազատ է հայ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն: Նա պատկերել է ոչ միայն ծովը տարբեր վիճակներում, տարբեր եղանակների, օրվա տարբեր պահերի, այլև ծովում կատարվող իրադարձությունները՝ նավաբեկություններ, ծովամարտեր:

Հովհաննես Այվազովսկի. «Իններորդ ալիք»

Դիտե՛ք Հովհաննես Այվազովսկու «Իններորդ ալիք» նկարը: Նկարիչը պատկերել է նավաբեկման հետևանքով անսանձ տարերքին մատնված, սակայն փրկության հույսը չկորցրած ուժասպառ մարդկանց պայքարն իններորդ՝ ամենաբարձր ալիքի դեմ:

Ունկնդրեք

Դիտե՛ք նկարը և ունկնդրե՛ք Ռիմսկի–Կորսակովի «Շահարազադե» սիմֆոնիկ սյուիտից հատված:

Հարցեր և առաջադրանքներ

- Ովքե՞ր են Մարտիրոս և Ղազարոս Սարյանները, ի՞նչ գիտեք նրանց մասին:
- Քանի՞ մասից է բաղկացած «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն:
- Ո՞վ է Ն. Ռիմսկի–Կորսակովը, ի՞նչ ստեղծագործություններ է գրել:
- Ի՞նչ գիտեք «Շահարազադե» սիմֆոնիկ սյուիտի մասին:
- Ո՞վ է Հովհաննես Այվազովսկին, ի՞նչ նկարներ նա ունի:
- «Իններորդ ալիք» ծովանկարը դիտելիս ի՞նչ երաժշտություն եք մտաբերում:

ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Երաժշտության և կերպարվեստի համար ընդհանուր է կյանքի երևույթների և մարդկային զգացմունքների արտացոլումը: Դրանք, միմյանց լրացնելով ու հարստացնելով, ուժեղացնում են երաժշտության և կերպարվեստի ստեղծագործությունների արտահայտչականությունը, սերմանում գեղեցիկի զգացողություն:

Դուք իմացաք, որ հնչյունների շարժման շնորհիվ նույն երաժշտական ստեղծագործության մեջ հնարավոր է արտահայտել տարբեր տրամադրություններ՝ ուրախություն, տխրություն և այլն: Կերպարվեստն այդ հնարավորությունը չունի: Նկարում բնապատկերները անշարժ են: Սակայն յուրաքանչյուր նկար դիտելիս կարող ես զգալ նկարում արտահայտված տրամադրությունը և այն վերարտադրել երաժշտության միջոցով:

Վարդգես Սուրենյանց. «Ծաղկակիրներ»

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՏՐՈՆՈՒՄ

«Թատրոնը» հունարեն բառ է, որը նշանակում է ներկայացում: Թատրոնը միշտ եղել է հայ ժողովրդի սիրած արվեստներից մեկը:

Պատմական տեղեկությունների համաձայն՝ Ք.ա. 69 թ. հայոց թագավոր Տիգրան Երկրորդը Տիգրանակերտում թատրոն է կառուցել և հրավիրել հույն դերասանների: Իսկ Ք.ա. 53 թ. Արտաշատ քաղաքում Արտավազդ Երկրորդը պալատական խնջույքի սրահում հույն դերասանների հետ անձամբ է խաղացել ներկայացումներում: Նա նաև պիեսներ է գրել թատրոնի համար:

Այսօր Հայաստանում գործում են դրամատիկական, տիկնիկային, պատանի հանդիսատեսի, երիտասարդական, երաժշտական կոմեդիայի թատրոնները, որոնք ներկայացումներ ունեն տարբեր տարիքի հանդիսատեսի համար: Այս բոլոր թատրոններում երաժշտությունն իր ուրույն տեղն ունի:

Երաժշտական կոմեդիայի թատրոնում դերասանները և՛ խոսում են, և՛ երգում, անհրաժեշտության դեպքում՝ նաև պարում: Երաժշտական հատվածներում նրանց կարող է նվագակցել սիմֆոնիկ նվագախումբը: Հայաստանում առաջին պետական դրամատիկական թատրոնը հիմնադրվել է 1921 թվականին և ստացել ականավոր գրող, դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի անունը:

Թատրոնը նույնպես ունի իր լեզուն և արտահայտչամիջոցները: Դրանք են խոսքը, դերասանական խաղը, շարժումների պլաս-

Արամ Խաչատրյան. «Դիմակահանդես»

տիկան, մնջախաղը, դիմախաղը, գրիմը, բեմական հագուստը, լույսը, դեկորները և այլն: Թատրոնը համատեղ ստեղծագործական աշխատանք է, որին մասնակցում են գրողը (դրամատուրգը), ռեժիսորը, դերասանը, նկարիչը, կոմպոզիտորը և այլն: Թատրոնում գրական տեքստը կոչվում է պիես:

Երաժշտությունը յուրօրինակ դերակատարում ունի դրամատիկական թատրոնում և կինոյում:

Թատրոնում առաջնայինը խոսքն է: Երաժշտությունն օգնում է ռեժիսորին՝ իրականացնելու իր մտահղացումները: Երաժշտությունը ներգործում է նաև հանդիսատեսի վրա, առաջացնում հուզական վերաբերմունք բեմում կատարվող գործողությունների նկատմամբ: Զուլվելով ներկայացման բովանդակությանը և գործողությանը՝ միասնական տրամադրություն է ստեղծում դերասանի և հանդիսատեսի համար:

Ունկնդրեք

Ունկնդրեք «Նինայի ռոմանսը» և «Վալսը» Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի համար Արամ Խաչատրյանի գրած երաժշտությունից:

Լսելով «Նինայի ռոմանսը»՝ դուք կզգաք, թե որքան թախծոտ է այդ երաժշտությունը: Բնութագրելով գլխավոր հերոսուհուն՝ ազնիվ,

Միհայ Զիչի.
«Պարահանդես»

բարի Նինային, ռոմանսը միևնույն ժամանակ արտահայտում է նրա անհանգստությունը, հոգեկան տագնապը:

«Վալսը» պարահանդեսի տեսարանից է, արտահայտում է պարողների ուրախ իրարանցումը, խելահեղ, անզուսպ զվարճանքը: Այն ավելի է ընդգծում Նինայի տագնապահույզ հոգեվիճակը: Նինան հենց պարահանդեսի սրահում կորցնում է ամուսնու նվիրած ապարանջանը, որը ողբերգության առիթ է դառնում: Եթե ուշադիր լսեք, վալսի երաժշտության մեջ կզգաք վերահաս հուզմունքն ու տագնապը:

1961 թվականին Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց ամերիկահայ ականավոր գրող Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը: Բեմադրության ռեժիսորը Վարդան Աճեմյանն էր, իսկ երաժշտության հեղինակը՝ կոմպոզիտոր Առնո Բաբաջանյանը:

Ներկայացումն ընթանում էր առանց ընդմիջումների. այդպես էր կամեցել հեղինակը: Նա ասում էր. «Սա երգ–ներկայացում է, իսկ երգն ինչպե՞ս կընդմիջվի»: Սարոյանը նկատի ուներ պիեսի բովանդակության՝ երգի նման նուրբ «հյուսվածքը», գործողությանը բանաստեղծական շունչ հաղորդող քնարական տրամադրությունը:

Բաբաջանյանի գրած երաժշտությունը ոչ միայն հուզական մեծ լիցք է հաղորդում գործողությանը, այլև դառնում է ներկայացման գլխավոր «հերոսներից» մեկը: Երաժշտությունը և մանավանդ «Իմ սիրտը լեռներում է» երգ–մեղեդին օգնում են պատմել մի հուզիչ պատմություն, թե ինչպես է դառը ճակատագիրը բարի մարդկանց գաղթական դարձրել և նետել հեռավոր Ամերիկայի ափերը: Հայուհի ծեր Մարեի ընտանիքը և նրանց լավ բարեկամ, շոտլանդացի տարեց շեփորահար Մաք–

Վիլյամ Սարոյան.
«Իմ սիրտը լեռներում է»

Գրեգորը մաքառում են կյանքի դժվարությունների դեմ և տառապում իրենց հայրենիքի կարոտից: Նրանց միավորում են հոգու մաքրությունը և հայրենիքի կարոտը: Չնայած նրանք հայտնվել են օտար երկնքի տակ, սակայն իրենց սրտերը թողել են հայրենի լեռներում: Այդ մասին է շոտլանդական երգը, որը շեփորով նվագում էր Մաք–Գրեգորը:

Ունկնդրեք

Ունկնդրեք Ա. Բաբաջանյանի շոտլանդական երգը և ուշադրությունդարձրեք, թե հայ կոմպոզիտորը ինչպես է կարողացել շոտլանդական ժողովրդական երաժշտության ոգով այնպիսի երգ ստեղծել, որ հոգեհարազատ լինի և՛ հային, և՛ ամերիկացուն, և՛ ֆրանսիացուն:

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ արվեստ է թատրոնը: Ի՞նչ է նշանակում «թատրոն» բառը:
- Հայաստանում գործող ի՞նչ թատրոններ գիտեք:
- Ի՞նչ դեր ունի երաժշտությունը թատրոնում:
- Ո՞վ է Լերմոնտովի «Դիմակահանդես» դրամայի երաժշտության հեղինակը:
- Ո՞վ է գրել Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսի ներկայացման երաժշտությունը:
- Թատերական ի՞նչ ներկայացումներ եք դիտել:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՆՈՅՈՒՄ

Կինոն հունարեն «կինեմա» բառից է, որը նշանակում է շարժում: Այն «շարժվող նկարների» տեսալսողական արվեստ է, ստեղծվել է 1895 թ. և կապված է ֆրանսիացի գյուտարարներ Օգյուստ և Լուի Լյումիեր եղբայրների անվան հետ:

Սկզբում կինոն եղել է «համր»՝ առանց ձայնի: Էկրանի վրա երևացել են միայն շարժվող պատկերներ, իսկ 1930 թվականից կինոն դարձել է հնչյունային:

Կինոն ընդգրկում է արվեստի մեծ ընտանիքի անդամներին՝ գրականություն, երաժշտություն, պարարվեստ, կերպարվեստ և թատրոն:

Երաժշտությունը միշտ եղել է կինոյի անբաժան մասը: Դեռ համր կինոյի ժամանակներում շարժվող պատկերներն ուղեկցվել են երաժշտությամբ. կինոսրահում ցուցադրմանը զուգահեռ նվագել է դաշնակահարը՝ ընտրելով կինոնկարի բովանդակությանը և բնույթին համապատասխան երաժշտություն:

Հայաստանում առաջին համր կինոնկարը ստեղծվել է 1925 թվականին: Դա Ալեքսանդր Շիրվանզադեի «Նամուս» վեպի հիման վրա նկարահանված համանուն կինոնկարն է:

Այսօրվա կինոն դժվար է պատկերացնել առանց երաժշտության, որի հնչյունները, միավորվելով կինոյի պատկերներին, ոչ միայն հուզական երանգ են տալիս կատարվող իրադարձություններին, որոշակի տրամադրություն ստեղծում, այլև բնութագրում են հերոսներին, կենդանություն տալիս նրանց կերպարներին, գործողությունները դարձնում ավելի արտահայտիչ ու տպավորիչ:

Եթե կինոնկար դիտելիս երաժշտությամբ ուղեկցվող հատվածում մի պահ անջատեք ձայնը և դիտեք միայն շարժվող պատկեր-

ները, կտեսնեք, որ կինոնկարը կկորցնի հետաքրքրությունը:

Կինոնկարի ստեղծմանը մասնակցում են սցենարի հեղինակը, ռեժիսորը, օպերատորը, կոմպոզիտորը, նկարիչը, բալետմայստերը, դերասանները և այլք:

Հայկական առաջին հնչյունային կինոնկարը «Պեպոն» է, որը նկարահանվել է 1935 թվականին Գաբրիել Սունդուկյանի համանուն կատակերգության հիման վրա: Նվիրված է թիֆլիսաբնակ հայերի կյանքին ու բարքերին, մասնավորապես չքավոր ձկնորս Պեպոյի և նրա ընտանիքի ու ընկերների՝ զրկանքներով լի կյանքին:

Կինոնկարի բեմադրող ռեժիսորն է Համո Բեկնազարյանը, երաժշտության հեղինակը՝ Արամ Խաչատրյանը:

Կոմպոզիտորը կինոնկարի համար կարողացել է ստեղծել վառ ազգային և արտահայտիչ երաժշտություն, որն արտացոլում է ժամանակի իրական պատկերը, հայերի կենցաղը, ապրելակերպը, մարդկանց փոխհարաբերությունները: Աղքատ մարդկանց բնութագրելու համար Ա. Խաչատրյանը դիմել է ժողովրդական երգերին ու պարերին ժողովրդական նվագարանների՝ շվիի, դուդուկի, սազի, թառի, քամանչայի, դհոլի կատարմամբ: Իսկ գոռոզ, իբր եվրոպական կենսաձևին հետևող, անազնիվ ճանապարհով հարստացած Զիմզիմովին և նրա նման մարդկանց բնութագրելիս կոմպոզիտորն օգտագործել է եվրոպական պարային ձևերը՝ վալս, պադեսպան, պոլկա, որոնք կինոնկարում ծաղրական երանգ են ստացել:

Արամ Խաչատրյանը երաժշտություն է գրել բազմաթիվ այլ կինոնկարների համար՝ հայկական «Զանգեզուր», ռուսական «Ստալինգրադյան ճակատամարտը», «Ծովակալ Ուշակով», «Օթելլո» և այլն:

Դրվագ «Պեպո» կինոնկարից. Պեպո — Հրաչյա Ներսիսյան

Ունկնդրեք

Ունկնդրեք, ապա սովորեք «Պեպոյի երգը»: Փորձեք զգալ և ճիշտ արտահայտել երգի տրամադրությունը: Երգեք անկաշկանդ, հնչեղ ձայնով:

ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ

Դամբը ձեռիս ջուրն եմ մտնում,
Ձեռս, ոտս թաց է լինում,
Հալալ արյուն-քրտինք թափիմ,
Քիրս ու դեդիս լաց ին լինում:

Դամբը ձեռիս աշխատում եմ,
Հալալ աշխատանքս իմ ուտում,
Վա՜յ էն մարդին, ով աշխարհքում
Խալխի դատած հացն է ուտում:

Հալալ մարդու սիրտն է ուրախ,
Ճակատը միշտ թաց է ըլլում,
Վա՜յ էն մարդին, վուր համ գջլում*,
Համ էլ անկուշտ լաց է ըլլում:

* *Գջլել — իլել*

ՊԵՊՈՅԻ ԵՐԳԸ

Խոսք՝ Ե. Չարենցի
Երաժշտ.՝ Ա. Խաչատրյանի



Ունկնդրեք

Ունկնդրեք «Պադեսպան», «Պոլկա» և «Վալս» պարերը:

Դրվագ «Պեպո» կինոնկարից. Դարչո — Համբարձում Խաչանյան

ԽԱՉԲԱՌ

1						
4						
					5	
	6					2
3						

1. Հայ գրող, որի վեպի հիման վրա նկարահանվել է Հայաստանում առաջին համր կինոնկարը:
2. Արվեստի տեսակ, որն անվանում են լսողական, ժամանակային:
3. Ալեքսանդր Շիրվանզադեի վեպը:
4. Արամ Խաչատրյանի բալետը:
5. Արվեստի տեսակ, որն անվանում են տեսողական, տարածական:
6. «Անուշ» օպերայի հեղինակը:

Հարցեր և առաջադրանքներ

- Արվեստի ինչպիսի՞ տեսակ է կինոն: Պատմե՛ք կինոյի մասին:
- Ինչպիսի՞ն է եղել կինոն սկզբնական շրջանում:
- Ի՞նչ դեր է կատարում երաժշտությունը կինոյում:
- Դիտե՛ք «Պեպո» կինոնկարը և պատմե՛ք ձեր տպավորությունները ֆիլմի ու երաժշտության մասին:

Դրվագ «Անահիտ» կինոնկարից. Անահիտ — Մ. Սիմոնյան, Վաչագան — Ֆ. Դովլաթյան

Կոմպոզիտոր Աշոտ Սաթյանը նույնպես երաժշտություն է գրել կինոնկարների համար, վարպետորեն արտահայտել կինոնկարի հերոսների տրամադրությունը, իրադարձությունների և դրվագների էությունը: Նրա կինոերաժշտությունում երգն առանցքային տեղ է գրավում: Օրինակ՝ «Արարատյան դաշտի աղջիկը» ֆիլմն անվանում են երգ–կինոնկար, քանի որ երգերը հնչում են ամբողջ ֆիլմի ընթացքում:

Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթի հիման վրա նկարահանված կինոնկարի երաժշտությունը նույնպես գրել է Աշոտ Սաթյանը (ռեժիսոր՝ Համո Բեկնազարյան, 1947 թ.): Հեքիաթի և ֆիլմի բովանդակության հիմքում գեղջկուհի Անահիտի և հայոց թագավոր Վաչագանի սիրո պատմությունն է և այն գաղափարը, որ բարդ իրավիճակներում յուրաքանչյուր մարդու՝ լինի թագավոր թե ռամիկ, փրկությունը որևէ արհեստի տիրապետելն է:

Աշոտ Սաթյանի կինոերգերը այսօր էլ շատ սիրելի են: Դրանցից են «Մարտիկի երգը», «Արարատյան դաշտի երգը», «Խաղողաքաղը» և «Ես իմ անուշ Հայաստանի» երգը:

Ունկնդրեք

Ունկնդրեք Աշոտ Սաթյանի երգերը:

Սովորեք

Սովորեք «Հզոր բանակ» երգը: Աշխատեք արտահայտել երգի տրամադրությունը: Երգը կատարեք երկձայն:

ՀԶՈՐ ԲԱՆԱԿ

Խոսք՝ Հ. Շիրազի
Երաժշտ.՝ Ա. Սաթյանի

Քայլերգային

Հա - յաս - պա - նի սա - րե - րի պես Թի - կունք
ու - նես, հզ - ո՛ր բա - նակ, Ոչ մի
ո - ստոխ չի հաղ - թի քեզ, Մեր հաղ -
թա - կան հզ - ո՛ր բա - նակ: Դու՝ մեր
փոքր - կիչ, մեր ա - պա - վեն, Խա - վա -
րի դեմ վառ ա - րե - զակ, Չար թշ -
նա - միք որ - քան դա - վեն, Դու՝ ան -
խոր - պակ, հզ - ո՛ր բա - նակ:

Հայաստանի սարերի պես
Թիկունք ունես, հզո՛ր բանակ,
Ոչ մի ոստոխ չի հաղթի քեզ,
Մեր հաղթական հզո՛ր բանակ:

Կրկներգ

Դու՝ մեր փրկիչ, մեր ապավեն,
Խավարի դեմ վառ արեգակ,
Չար թշնամիք որքան դավեն,
Դու՝ անխորտակ, հզո՛ր բանակ:

Նորից պիտի քո զրահով
Ծաղկի երկրի հողն ապահով
Հավերժական արևի տակ,
Անմա՛ր կրակ, հզո՛ր բանակ:

Կրկներգ

Դու՝ մեր փրկիչ....

Կատարեք

Պատմեք Աշոտ Սաթյանի երաժշտությունից ստացած ձեր տպավորությունները:

Դրվագ «Նվագախմբի տղաները» կինոնկարից

«Նվագախմբի տղաները» հանրահայտ կինոնկարի երաժշտության հեղինակը հայ կոմպոզիտոր Գևորգ Արմենյանն է: Ռեժիսորներն են Հենրիկ Մալյանը և Հենրիկ Մարգարյանը: Այս կինոնկարում հիմնական հերոսները զինվորական նվագախմբի երաժիշտներն են: Նվագախմբի ամենակրտսեր անդամը՝ «գնդի որդի» Ճուտոն, հորինում է

մի մեղեդի և սկսում է սուլել: Նվագախմբի տղաներին դուր է գալիս Ճուտոյի մեղեդին: Այն զարգանալով և մշակվելով՝ վերջում դառնում է հանդիսավոր, հաղթական, գեղեցիկ քայլերգ:

Այս կինոնկարի երաժշտությունը շատ սիրված է, իսկ քայլերգն այսօր էլ հնչում է տարբեր հանդիսությունների ժամանակ:

Ունկնդրե՛ք «Նվագախմբի տղաները» կինոնկարի երաժշտությունից երկու հատված՝ «Քայլերգը» և «Տրնգին»:

Ունկնդրե՛ք

Հարցեր և առաջադրանքներ

- Կոմպոզիտոր Աշոտ Սաթյանի ո՞ր երգերը գիտեք:
- Ո՞վ է «Նվագախմբի տղաները» կինոնկարի երաժշտության հեղինակը:
- Ո՞վ է Ա. Խաչատրյանի «Պեպոյի երգի» խոսքերի հեղինակը:
- Պատմե՛ք ձեր դիտած կինոնկարների երաժշտության մասին:
- Ի՞նչ երգեր գիտեք կինոնկարներից: Երգե՛ք:
- Տնային դիտման համար ձեռք բերեք «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանված կինոնկարների «Ոսկե հավաքածուն» (DVD) և դիտե՛ք ձեր ընտանիքի անդամների հետ: Հայկական ո՞ր կինոնկարն եք ամենաշատը սիրում: Ինչո՞ւ:

ԹԵՄԱՅԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Թատրոնում և կինոյում երաժշտությունը կարևոր դերակատարում ունի: Արվեստի տեսակները, միմյանց լրացնելով, հանդիսատեսի մեջ առաջացնում են որոշակի զգացմունքներ, հույզեր, հիշողություններ ու մտքեր: Թատրոնը և կինոն ներգործում են հանդիսատեսի սրտի և մտքի վրա:

Թատրոնում և կինոյում հանդիսատեսի ու դերասանների միջև ստեղծվում է ներքին երկխոսություն, հոգևոր մտերմիկ կապ. նրանց հետ դուք ուրախանում եք, ծիծաղում, տխրում, հուզվում: Մեծ է թատրոնի և կինոյի ներգործության ուժը:

ԽԱՉԲԱՌ



1. «Անահիտ» կինոնկարի երաժշտության հեղինակը:
2. «Արշակ Երկրորդ» օպերայի հեղինակը:
3. Հայ դասական երաժշտության հիմնադիրը:
4. Ռ. Մելիքյանի «Պսակ–պսակ» երգի խոսքերի հեղինակը:
5. Հայ անվանի նկարիչ, «Հայոց այբուբեն» գոբելենի հեղինակը:
6. Հայ անվանի կոմպոզիտոր, «Հայաստան» սիմֆոնիկ պաննոյի հեղինակը:
7. Հայ աշխարհահռչակ ծովանկարիչ:
8. «Նվագախմբի տղաները» հանրահայտ կինոնկարի երաժշտության հեղինակը:

Եթե ճիշտ գտնեք պատասխանները, ապա ուղղահայաց կկարդաք «Մնուշ» պոեմի հեղինակի ազգանունը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

(«Հայրենիք» կանտատից)

Խոսք՝ Սարմենի, Ա. Գրաշու
Երաժշտ.՝ Ա. Հարությունյանի



ՔԱՄԱՆՉԱ

Սայաթ–Նովա

Չափավոր

Ա–մէն սա–զի մէ–չըն զո–ված, դուն թա–մամ կաան

իս, քա–ման–չա՛, Նա–քազ մարթ քիզ չի կա–նա պես – նի՝

դուն նը – բա պաան իս, քա–ման–չա՛, Ղա՛ստ ա–բա՝ էլ

լավ օ – բե – բու է – դի–վընհաս – նիս, քա – ման – չա՛,

Քիզ ինձ–նից ո՞վ կա – նա իր – լի՝

ա – շու – դի բաան իս, քա – ման – չա՛:

ՊՍԱԿ–ՊՍԱԿ

Խոսք՝ Հ. Աղաբաբի
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Չափավոր

Պը–սակ, պը–սակ, փիկ–նի պը–սակ, Փե–սան և – կավ՝

լի–քը քը–սակ: Պը–սակ, պը–սակ, փիկ–նի պը սակ, Փե–սան և – կավ՝



ՊԱՏԳԱՄ ՈՐԴՈՒՍ

Խոսք՝ Ս. Կապուտիկյանի
Երաժշտ.՝ Ռ. Պետրոսյանի

Քայլերգային



ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Խոսք՝ Օվերբեկի
Թարգմ.՝ Մ. Միրզայանի
Երաժշտ.՝ Մոցարտի



ԿՌՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Չափավոր

Դու բա - ռո՛վ ե - կար, իմ կը - ռո՛ւնկ,

Ի՞նչ լուր բե - րիր հայ - րե - նի - քեռ,

Խո - սի՛ր ինձ հեր ա - զա - տո -

ռեն, Կյան - քըս կը - նը - վի - ռեմ ես քեզ:

Վերջավորություն

Ե - դե - մա - կան դը - բախ - տա - վայր, Դա կոչ -

վում է մայր Հա - յաս - տան:

ՎԱՐԴԸ

Խոսք՝ Գյոթեի
Թարգմ.՝ Հ. Թումանյանի
Երաժշտ.՝ Ռ. Մելիքյանի

Հանդարտ

p

Փոք - րիկ դը - ղան մի վարդ դե - սավ,

Տե - սավ մի վարդ դաշ - դի մի - ջին,



ՋԱ՛Ն, ԵՐԵՎԱ՛Ն

Չափավոր արագ

Խոսք՝ Հ. Ղուկասյանի
Երաժշտ.՝ Ա. Այվազյանի





Բոլորին կանչում ենք, եկե՛ք Երևան,
Օդը դուրեկան է, ջուրն՝ անմահական,
Դա մի բուրաստան է,
ձեզ ասենք շիտակ,
Մեր Մասիսների սուրբ, վառ
հայացքի տակ:

Հե՛յ ջան, Երևա՛ն,
հարազատ օրրան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, դու իմ Երևա՛ն:

Չի ապրել կյանքում նա,
ով գեթ մի անգամ
Չի տեսել քաղաք, անունը՝ Երևան,
Վարդագույն երազ է, աստղերը վկա,
Ով տեսնի քաղաքը,
էլ հանգիստ չկա:

Հե՛յ ջան, Երևա՛ն,
փառք քո սուրբ անվան,
Հե՛յ ջան, հե՛յ ջան, դու իմ Երևա՛ն:

ԹԻԹԵՌ

Խոսք՝ Վ. Վարդունու
Երաժշտ.՝ Է. Էլբակյանի



Թևի՛ր թեթև,
Թիթե՛ռ խալոտ,
Թեթև, սեթև,
Խալոտ, ալրոտ:

Իջի՛ր ծաղկին,
Ննջի՛ր վրան,
Ալ ժապավե՛ն
Դարձիր նրան:

ՄԱՐԱԼՈ

Հայկական ժողովրդական
Մշակումը՝ Ա. Փահլևանյանի

Չափավոր



Մարալո՛, ծաղիկ ես բաղի միջին,
Մարալո՛, մի հատ ես թաղի միջին:
Մարալո՛, գիշեր–ցերեկ միալար,
Մարալո՛, դու ես իմ խաղի միջին:

Կրկներգ
Մարալո՛, ջա՜ն մարալո, մարալո՛,
Մարալո՛, սարի աղջի՛կ մարալո:

Մարալո՛, արև դիպավ սարերուն,
Մարալո՛, կաքավ թռավ քարերուն,
Մարալո՛, առավոտ բարի լուսուն,
Մարալո՛, ես մայիլ եմ քո տեսուն:

Կրկներգ
Մարալո՛, ջա՜ն մարալո, մարալո՛,
Մարալո՛, սարի աղջի՛կ մարալո:

ԼԵ՛, ԼԵ՛

Հայկական ժողովրդական
Մշակումը՝ Ա. Փահլևանյանի

Չափավոր



Մի ծառ ունեմ Հընդու քաղաք, լե՛, լե՛,
Ճուղք ա տվել քաղքեքաղաք, լե՛, լե՛,
Ամեն ճղին մի–մի ճրագ, լե՛, լե՛,
Ճրագի վրեն Սինամա հավք, լե՛, լե՛:

Կրկներգ — Լե՛, լե՛, լե՛...

Արտի միջին կանաչ խոտ ա, լե՛, լե՛,
Ծաղիկները խնկահոտ ա, լե՛, լե՛,
Էրթանք ծաղիկներ քաղելու, լե՛, լե՛,
Քանի Համբարձումը մոտ ա, լե՛, լե՛:

Կրկներգ — Լե՛, լե՛, լե՛...

Կանաչ կանաչը կանչեցեք, լե՛, լե՛,
Կանաչ մեյդանը բացեցեք, լե՛, լե՛,
Աղջիկ–տղա մեյդան կգան, լե՛, լե՛,
Պար ու սեյրանը բացեցեք, լե՛, լե՛:

Կրկներգ — Լե՛, լե՛, լե՛...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արվեստների փոխկապվածությունը և փոխազդեցությունը 5
Թեմա 1. Երաժշտությունը և գրականությունը 6
Երգ 7
Աշուղական երգ 13
Ռոմանս 15
Կանտատ 19
Օպերա 21
Թեմայի ամփոփում 34
Թեմա 2. Երաժշտությունը և պարարվեստը 35
Երաժշտության և պարի ընդհանրությունը 37
Ինտերվալ 39
Ժողովրդական պար 41
Դասական պար 45
Թեմայի ամփոփում 50
Թեմա 3. Երաժշտությունը և կերպարվեստը 52
Կարո՞ղ եք երաժշտությունը «տեսնել» 54
Շարունակենք ծանոթանալ ինտերվալներին 56
Երաժշտությամբ «նկարված» պատկերներ 58
Շարունակե՛ք երաժշտության մեջ «տեսնել» պատկերներ 59
Կարո՞ղ եք արդյոք «լսել» նկարը 61
Շարունակե՛ք նկարի մեջ «լսել» երաժշտություն 64
Նկարի կերպարները երաժշտության մեջ 66
Թեմայի ամփոփում 71
Թեմա 4. Երաժշտությունը թատրոնում և կինոյում 72
Երաժշտությունը թատրոնում 72
Երաժշտությունը կինոյում 76
Թեմայի ամփոփում 84
ՀԱՎԵԼՎԱԾ 85
Օրորոցային 85
Քամանչա 86
Պսակ–պսակ 86
Պատգամ որդուս 87
Գարնան կարոտ 88
Կռունկ Հայաստանի 89
Վարդը 89
Ջա՛ն, Երևա՛ն 90
Թիթեռ 92
Մարալո 93
Լե՛, Լե՛ 94

ՅՈՒՐԻ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ, ԱԼԻՆԱ ԱՇՈՏԻ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

5–րդ դասարան

Դասագիրք 12–ամյա
հանրակրթական դպրոցի համար

Վերահրատարակություն

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Խմբագիր՝ Գոհար Քալաշյան
Համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի
Ժագ Թոփալագյանի
Նոտաների խմբագրումը և մշակումը՝ Արեգ Լուսինյանի
Համակարգչային նոտագրումը՝ Մարիամ Հարությունյանի

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐ

ՇԱՊԻԿԻՆ՝ Ֆրանս Հալս. «Երգող և նվագակցող տղաները», Ռաֆայել. «Պառնաս»
էջ 6, 7, 34՝ Հայաստանի ազգային արխիվ, էջ 9, 16, 34՝ Ա. Փահլևանյանի անձնական արխիվ, էջ 10՝ Ֆելիքս Մենդելսոն/James Warren Childe, էջ 12՝ Երևանի պատմության թանգարան, էջ 13՝ Հայաստանի ազգային արխիվ, էջ 14՝ © Հ. Կարապետյան, էջեր 22, 23, 26, 27, 29, 34, 36, 75, 78, 79, 80, 82, 83՝ Սերգեյ Առաքելյանի անձնական արխիվ, էջ 21՝ © Հ. Կարապետյան, էջ 32՝ © Karl Friedrich Schinkel, էջ 34՝ © Otto Erich/Mozart, էջ 31՝ © Հ. Կարապետյան, էջ 37՝ © Կարեն Ասատրյան, էջ 38՝ © Մ. Դեղեյան, էջ 43՝ © Scannn par Huster, էջեր 47, 59, 73՝ Ա. Խաչատրյանի տուն–թանգարան, էջ 49՝ անհայտ լուսանկարիչ, էջ 58՝ © Ernst Emil Aubert, էջ 64՝ Մ. Սարյանի տուն–թանգարան, էջ 66՝ © Յ. Յուզբաշյան:

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70x100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ
Տառատեսակը՝ «Ասպետ»: Պատվեր՝ 03/Հ–20
Տպաքանակը՝ 39 195

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak